ՀԱՅՐԵՆԻՔ



1945

Ամ146

ՊԱ-1001

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՄ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍԿՕԼԱՅԻ

Ա. ԷՋՄԻԱԾԻՆԻ

1945

ՀԱՅԿ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հայ եկեղեցու և հայ ժողովրդի բռնած դիրքը հայրենական մեծ պատերազմի ընթացքում 3

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

2. Մայր Աթոռ 6
3. Գեր. Տ. Ներսես արքեպիսկոպոս Մելիք Թանգյան 8
4. Գեր. Տ. Մամբրե եպիսկոպոս Սիրունյան 10

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

5. Ռուսական ուղղափառ եկեղեցու ժողովը 12

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՇՆՈՒՆԴ

6. Հայսեփ Գրիգորյան—Շնորհավոր նոր տարի 13

ԿՐՈՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ

7. Առավագ արհեպիսկոպոս—Հայ լատին եկեղ. հարաբեր. հույն-լատ. հարբերությամբ 16
8. Ռուբեն վարդապետ—Մովսես կաթողիկոսը որպես հայրենասեր և շինարար . 24
9. Նուպար Մազմուրյան—Հին Հայաստանի տոհմային սովորությունները ու սովորությունները 30
10. Ս. տեր Ավետիսյան — Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյան 35
11. Լուսիկ Սարգսյան—Հայ եկեղեց. շարականների մասին 40
12. Ռուբեն վարդապետ—Հոգևոր հեմարանը 42
13. Նուպար Մազմուրյան—Հայաստան երկիր 44
14. Գրոնֆ. դոկտ. Ա. Աբրահամյան—Վեց տարիս Մերձավոր Արևելքում 45

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

15. Մ. Գրիգորյան—Մատենադարանի նախագիծը 50

Հայրենիքի տպարան, Երևան, 1946

ՀՐԱՄԱՆԱՒ

ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՆՆԱԾ ԴԻՐՔԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ի՞մ սիրելի ժողովուրդ, ցանկացել ես իմանալ, թե ի՞նչ դերք է բռնել հայ եկեղեցին, ի՞նչ ապրումներ է ունեցել նա և ի՞նչ է արել հայրենական մեծ պատերազմի ընթացքում։

1941 թվի հունիսի 22-ին պատերազմի սկզբանքը հնչեց և գերմանա-ֆաշիստական հորդաները ներխուժեցին մեր երկիրը։ Այդ ծանր օրերին հավատացյալ հայության աչքը գարձավ դեպի ս. էջմիածինը և սպասում էր նաև նրա ձայնին։

Պարզ է, որ ս. Էջմիածինը չէր կարող անտարբեր մնալ Հայրենիքին սպառնացող այդ վտանգի հանգեպ։ Ս. Էջմիածինը հրահանգեց արտասահմանի և Միությունական ռեսպուբլիկաների բոլոր թեմերին մաղթանքներ կատարել, ջերմագին աղոթքներ վերառաքել Բարձրյալին, Կարմիր Բանակի դեմքն օրհնել և հաղթություն մաղթել։

Առաջին մաղթանքը մեծ հանդիսավորությամբ և բարձր ոգևորությամբ կատարվեց Ս. Էջմիածնում։ Այրթոդների աչքերում արտասուքի կաթիլներ երևվեցան։ Ջերմ և հուզիչ էր ժողովրդի սրտալի աղոթքը, որով ուխտում էր նա ամեն գնով Հայրենիքը պաշտպանել։

Այս մաղթանքը ապացուցեց մեզ, որ Հայրենիքի սերը խորն է հավատացյալի սրտում և նրա համար քրիստոնեական պարտականություն է այն։

Պատերազմի հաղթական ելքն ապահովելու համար Ս. Էջմիածինը Հայրենասիրական կոչեր ուղարկեց ամենուրեք ժողովրդի սիրտը հայրենասիրական զգացմունքով վառելու, Հայությունը միավորելու մեկ մարդ ոտքի հանելու, իր զույքն ու կայքը, իր ժամավոր ու ֆիզիկական աշխատանքը, իր կյանքը տրամադրելու Հայրենիքի պաշտպանության, թշնամուն իր երկրից վտարելու և նրան վերջնականապես ջախջախելու սուրբ գործին, թշնամու, որ ամբողջ մարդկության թշվառության, չնչին երկրների ավերածության, նրանց կուլտուրական ստեղծագործության ոչնչացման պատճառն է հանդիսացել և մարդկությունը ստրկացնելու ձգտումն ու նպատակ է ունեցել։

Ս. Էջմիածնի ձայնը լսեց հայ հոգևորականությունը և իր հոտին ուղղած հայրենասիրական հուզիչ քարոզներով ոգևորեց հայ հավատացյալներին Հայրենիքի պաշտպանության վեհ գաղափարով։

Հայոց պատմությունը հարուստ է հայ զորավարների սխրագործություններով, որոնք Հայրենիքի թշվառ օրերին նրա փրկությունն են կռվել—կռվել։ Նրանք հայ ժողովրդի անպարտելի հերոսներն են գրել և իրենց անվան չուրջը համախմբելով հայ ժողովուրդը կռվել են թշնամու դեմ Հանուն ազատության և անկախության, գերադասելով մեռնել, քան ստրուկ ապրել։ Նրանք կռվել են հայ ժողովրդի պատիվը փրկելու և Ս. Հայրենիքը պաշտպանելու համար։

Պատմական հայի նույն հերոս ոգին ապրում է նաև այսօր ներկա հայի մեջ։ Հայ ժողովուրդն այսօր էլ արիությամբ, հաստատակամությամբ և մեծ ոգևորությամբ կռվում է նենգ թշնամու դեմ տանելով պատերազմի ամենն մի ծանրություն և՛ ճակատում, և՛ թիկունքում։ Նա ամեն

գնով պաշտպանում է իր Հայրենիքը, իր Ժողովրդի պատիվը, իր անցյալ կուլտուրական ստեղծագործությունները և ներկա նվաճումները: Նա կռվում է ապավինած Աստուծո ողորմության և իր գործի արդարության, ուստի և հավատում է պատերազմի կատարյալ հաղթության:

Այդ հավատը առավել ևս իրական է համարում դիտենալով, որ քաջարի կարմիր Բանակը ղեկավարում է ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԸ. Ժողովրդի սիրելի Առաջնորդը և կարմիր Բանակի հանճարեղ Գերագույն Հրամանատարը, որի հանճարով կազմակերպվել ու կազմակերպվում են մեր բոլոր փառավոր հաղթանակները:

Հայ եկեղեցին՝ Ս. Էջմիածինը նույն հավատով և ոգևորությամբ հորդորական ուղերձներ ուղարկեց ամենուրեք, ուր Հայ հավատացյալ կար, նյութականապես և ոգեկցելու կարմիր Բանակին: Ս. Էջմիածինը ինքն առաջին օրինակը տվավ իր հաճախությամբ, նրա օրինակը վարակիչ եղավ Հայ հավատացյալների համար: Հայ հավատացյալներն ընդունեցին Ս. Էջմիածնի հրաները և ամեն կողմից առատ նվերներ ուղարկեցին Ս. Էջմիածին՝ նպաստելու պատերազմի հաղթության:

Հայ հավատացյալների նվերներով կատուցվեցին տանկային չարասյուներ, որոնք Հայ եկեղեցու ցանկությամբ կոչվեցին «Մասունգի Դավիթ»՝ Հայ պատմական էպոսի հերոսի անվամբ, որ անձնվիրության, քաջության և հաստատակամության մարմնացումն է:

Այս առթիվ պատիվ ունենանք ստանալու Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ողջույնն ու շնորհակալական հեռագիրը իր և կարմիր Բանակի կողմից արտահայտման և Միութենական հանրի հոգևորականության և հավատացյալ հայության:

Հասավ հայ հավատացյալների և նրա ղեկուցավորների ժամը, երբ Կատարվեց տանկերի հանձնումը գործող բանակին. Օրհնեցին Մենք մեր տանկային չարասյուները մաղթելով, որ նրանք թշնամու քարքաքանան զորավոր հենարաններ հանդիսանան: Տանկերի կառուցման, պատերազմի վայրն ուղարկելուն և նրանց կազմի կատարած քաջագործությունների մասին ստացված են տեղեկություններ համապատասխան դիվիզիոնական իշխանություններից, որոնց շնորհակալական և ոգևորությամբ լի հեռագրերը տպված են էջմիածնի ամսագրի առաջին երեք համարներում:

Հայ ժողովուրդը ոչ միայն զինական աջակցություն է ցույց տվել հայրենական մեծ պատերազմին, այլև թիկունքում տարել է կարևոր աշխատանքներ: Թիկունքում հայ կինը, հայ ծերունին և հայ պատանին փոխարինել են երիտասարդ մարտիկներին և գաղտի աշխատանքներում, և գործարաններում, և տներ: Թիկունքում հայ մարդը հոգացողություն է ունեցել նաև մարտիկների ընտանիքների վերաբերմամբ՝ խնամելով նրանց կանանց ու երեխաներին, մասնակցություն է ցուցաբերել վիրավորներին, նվերներ է ուղարկել մարտիկներին, որպես նշանակ իր տածած սիրո: Այս բոլորն արել է, որպեսզի մարտիկներն ազատ լինելով ընտանեկան հոգսերից խաղաղ հոգով ամբողջովին նվիրվեն պատերազմին:

Մենք, որպես Հովվապետ հայ եկեղեցու, զգացված ենք հայ ժողովրդի անձնվեր հայրենասիրությամբ, բայց առավել ևս դրդված ենք տեսնելով Միութենական ժողովուրդների շարքում հայ ժողովրդի վարած հերոսական պայքարը հանուն իր Հայրենիքի ազատության և ընդդեմ բռնության ու ստրկացման: Բերկրալի է լսել, որ օր ամեր աճում է հայ հերոսների թիվը, որոնք հարստացնում են և մեծացնում մեր Հնադարյան պատմությունը ու բարձր պահում հայ Ժողովրդի անունն ու պատիվը:

Վրդովեցուցիչ է տեսնել երկրի ավերածությունը, կուլտուրական ձեռնարկների ոչնչացումը, չեն քաղաքների ամայացումը, ժողովրդի բռնի և ապարդյուն զոհերվարությունը: Ծանր է և հուզիչ մարդկա-

յին կոտորածը, կենդանի էակների մահացումը, որ կատարել են ֆաշիստական հորդաները օկկուպացման ենթարկված բոլոր վայրերում: Սակայն պերմանական բարբարոսների վայրագությունները չընկճեցին Մեծ Միության հերոս ժողովուրդների անկուն կամքը:

Եվ այսօր համայն աշխարհի զարմանքի առարկա է այն ոգին, որով մեր երկրի բազմաբեղուն բնակչությունը անբակտելի միությամբ կապված ոտքի է կանգնել դերմանական ֆաշիզմի դեմ իր Հայրենիքը պաշտպանելու համար:

Այս ամենը հետևանք է Սովետական իշխանության վարած ազգային իմաստուն քաղաքականության:

Մեր պետությունը խրախուսում է յուրաքանչյուր ժողովրդի կուլտուրական զարգացումը, որի հետևանքով ամենափոքր ժողովուրդն անգամ ազատ է իր կյանքը կազմակերպելու և զարգացնելու իր ազգային ավանդությունների և սովորույթների համեմատ: Մեր պետությունը տնտեսապես էլ օժանդակում է յուրաքանչյուր ժողովրդի կուլտուրական զարգացման գործին: Նա միաժամանակ եղբայրական ամուր կապ է հաստատել մեր Միության բազմաբեղուն ժողովուրդների միջև, որոնց միահամուռ ջանքերով անարգ թշնամին վտարվեց մեր երկրի սահմաններից, ջախջախվեց նրա կենդանի ուժն ու գինական տեխնիկան և պատերազմական գործողությունները փոխադրեցին Գերմանիայի հողը:

Հայ ժողովուրդը դեռ մեծ անելիքներ ունի. նա միացած Միության ժողովուրդների հետ պիտի իր ուժերը լարի ինչպես Հայրենիքի ազատության և թշնամու վախճանական ջախջախման, նույնպես և ընդհանուր Հայրենիքի տնտեսական հզորացման, վերաշինության և վերակառուցման մեծ գործին: Պատերազմը անասելի վնասներ տվավ Միութենական բոլոր ռեսպուբլիկաներին: Սակայն այսօր մխիթարված ենք մենք, որ մեր ժողովուրդների պատմության մեջ չտեսնված անձնազոհության շնորհիվ շուտով աշխարհում խաղաղություն պիտի վերահաստատվի և մեր հզոր դաշնակիցների՝ Մեծ Բրիտանիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների ջերմ մասնակցությամբ համայն աշխարհի արդար ու անվտանգ վերակառուցման ականատես պիտի լինենք:

Օրհնում ենք Միութենական Ռեսպուբլիկաների բոլոր ժողովուրդներին հայրենական պատերազմում իրենց ցույց տված հայրենասիրական գործունեության համար:

Օրհնում ենք հերոս Գարմիր Բանակը և նրա իմաստուն Առաջնորդին՝ Մեծ Մարշալ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ, որի հանճարեղ ղեկավարության շնորհիվ ջախջախվեցավ գերմանական ֆաշիզմի գինական ուժը:

Խոնարհում ենք Հայրենիքի համար նահատակված մարտիկների շիրիմների առաջ և աղոթում Բարձրյալին նրանց արժանացնել վառաց սլսակի:

Օրհնում ենք նաև մեր հայ ժողովուրդը Հայրենական պատերազմում իր ցուցաբերած հավատարմության և անձնազոհ գործունեության համար: Կար և ուժ ենք մաղթում նրան, որ մեր երկրի ապագա վերաշինության շրջանում ի միասին լինի նույն անձնվիրությամբ հանդես գալու հաստատ ընդհանուր Հայրենիքի և Սովետական Հայաստանի մտավոր, բարոյական և տնտեսական զորացման:

Ս. ՋԳԱՐՅԱՆ ՕՏԴԱՆԱԼ ԱՄՍԱՆԱՑՆ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԵՎՈՐԴ ԱՐՏԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՌԻԲՈՒՏՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ

1945 թ. հունվարի 1-ին, նոր տարվա օրը, Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալ Գերապատիվ Տ. Գեվորգ արքեպիսկոպոսի ներկայությամբ Մայր Տաճարում մատուցվեց ս. պատարագ։

Պատարագից հետո նոր տարվա առթիվ քարոզ խոսեց Տ. Ռուբեն վարդապետը, որը հակիրճ նկարագրեց մեր եկեղեցու և ժողովրդի փոխհարաբերությունը՝ նշելով հայ հոգևորականության կատարած դերը Հայրենական Մեծ պատերազմի օրերին։

Տ. Ռուբեն վարդապետը քարոզն ավարտեց նոր տարվա առթիվ բարեմաղթություններով ցանկանալով Կարմիր Բանակին նոր, էլ ավելի մեծ հաղթանակներ դաժան և անագորույն թշնամու դեմ մղած հերոսական մարտում։ Պատարագիչը առողջություն և երկար կյանք բաղձացավ մեր հաղթանակների կազմակերպիչ Մեծ ՍՏԱԼԻՆԻՆ, շնորհավորեց Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Տ. Գեվորգ արքեպիսկոպոս Զեորեքյանի և միաբաններին ու ժողովրդի նոր տարին։ Հավատացյալները լարված ուշադրությամբ հետևում էին քարոզին։

Քարոզից հետո միաբանները շնորհավորեցին Տ. Տեղակալի նոր տարին համբուրելով նրա աջը։ Միաբանների օրինակին հետևեց հավատացյալների երկար բազմությունը։

Հունվարի 6-ի Ս. Էջմիածնի Մայր տաճարում Ամենայն Հայոց կաթողիկոսի Ազգընտիր Տեղակալ Գերապատիվ Տ. Գեվորգ արքեպիսկոպոսի ներկայությամբ խիստ հանդիսավոր պարագաներում մատուցվեց ճրագալույցի երեկոյան ս. պատարագը։ Տաճարը լեցուն էր հավատացյալների բազմությամբ։ Երեկոյան տեղի ունեցավ միաբանական ճաշկերույթ Գերապատիվ Տեր Տեղակալի մոտ։

***

Հունվարի 6-ին արտասովոր հանդիսավորությամբ ս. պատարագ մատուցվեց Ծննդյան տոնի առթիվ։ Պատարագից հետո տեղի ունեցավ ջրօրհնեքի սրբազան արարողությունը։

***

Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Տ. Գեվորգ արքեպիսկոպոսը Իրանահնդկաստանի թեմի առաջնորդ է նշանակել Տ. Վահան Ծայրագույն վարդապետ Կոստանյանին։

Տ. Վահան Ծ. վարդապետը հունվարի 25-ին մեկնեց իր պաշտոնատեղին։

***

Բեյրութում հրատարակվող «Ժողովրդի ձայն» թերթը 11-ն նոյեմբերի 1944 թ. ն. 758-ում հաղորդում է հետևյալը.

«Ամերիկահայ Ազգային Խորհուրդը գնահատելով «էջմիածին» ամսագրի հրատարակությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսությանն է ուղարկել 1000 դոլլար «էջմիածինը» ժամանակակից մի տպարանով ապահովելու համար։

Ազգային Խորհուրդը խոստացել է ավելի լայնորեն օժանդակել «էջմիածնին»։

***

Ամենայն Հայոց Հաղթապետության Ադրիտիր Տեղակալ Աթեն. Տ. Գևորգ արքեպիսկոպոսը Արմավիրի հայոց թեմի առաջնորդ է նշանակել Տ. Սուրեն Ծ. վարդապետ Թորոսյանին, իսկ Շիրակի թեմի առաջնորդ— Տ. Ռուբեն Ծ. վարդապետ Դրամբյանին։

***

Վերջերս սկսված է Նևակի պողոտայի վրա գտնվող հնադույն առաջնակարգ շենքերի վերակառուցումը, որոնք (կցաշենքերի հետ) կազմում են Ն. Հայկական եկեղեցու անսամբլի մի մասը։ Շենքը կառուցված է 18-րդ դարու 70-ական թվականներին նշանավոր ճարտարապետ Ֆելտոնի ձեռքով և մինչև մեր օրերը պահպանում է այն առաջին տեսքը, որ ունեցել է անցյալ դարի սկզբին։ Նրանցից մեկում 1852 թվից ապրել է ականավոր ռուս պոետ Ֆյուտչևը։ Հայոց եկեղեցու անսամբլի վերակառուցումը զգալիորեն կդեղեցկացնի Լենինգրադի կենտրոնական մագիստրալի տեսքը»։

(«Советское искусство», № 1, 1945)

ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ՆԵՐՍԵՍ ԵՐՊԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆ

Գերապատիվ Տ. Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը Աստրախանի հայոց թեմի առաջնորդն է: Նա հայոց եկեղեցու հայրենասեր հոգևորականներից մեկն է: Տ. Ներսես արքեպիսկոպոսը առաջիններից մեկն էր, որ արձագանգելով Ամենայն Հայոց Հայրապետության Ազգային Ցեղակալ Գեվորգ արքեպիսկոպոս Զեր-

որեքչյանի հայրենասիրական կոչերին Վասունցի Դավիթ տանկային շարասյուն կառուցելու համար, նախաձեռնեց Վասունցի Դավիթ շարասյան հանգանակությունը: Նա իր հավաքած միջոցների մասին հեռագրեց Գերագույն Գլխավոր Հրամանատար, Սովետական Միության Մարշալ ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ և ստացավ

ՍՏԱԼԻՆԻ ընտրակալությունը։ Տ. Ներսես սրբազանի նախագահությամբ Ատրպատականի թեմում վերջերս սկսվել է նաև բանակի հրամանատար Սովետական Միության հերոս Բագրամյանի անվան շարասյան հանդանակությունը։ Բացի այս հանդանակությունից Տ. Ներսես սրբազանի գլխավորությամբ Ատրպատականի թեմում մի քանիներ են հանդանակվել զոհված կարմիր բանակայիների երեխաների, Ատալինգրադի վերականգնման և այլ հայրենասիրական նպատակների համար։ Անցյալ գատկին Տ. Ներսես սրբազանը հատուկ կոչ էր հրատարակել Ատրպատականի հավատացյալների անունով, որի մեջ նա պատվիրում էր հավատացյալներին կրճատել իրենց գատկական ծախսերը և արտահայտած գումարը մուծել հայրենական պատերազմում զոհված կարմիր բանակայիների ընտանիքների օգնության ֆոնդը։

ԴԵՐԱՊԱՏԻՎ Տ. ՄԱՄԲՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ

Դերապատիվ Տ. Մամբրէ Եպիսկոպոս Սիրունյանը Եգիպտոսի Թեմի առաջնորդական փոխանորդն է։ Նա հաջորդել է երջանկահիշատակ Թորգոմ սրբազանին և տարիներ շարունակ, մեծ հեղինակությամբ վարում է այդ թեմը։ Մամբրե սրբազանի ջանքերով Եգիպտոսի թեմը զարգացել է հայոց եկեղեցու լավագույն և օրինակելի թեմերից մեկը։ Թեմում հիմնվել են մի շարք հայկական դպրոցներ, որտեղ հայ մանուկները հնարավորություն ունեն սովորելու մայրենի լեզուն, գրականությունը և պատմությունը։ Թեմում ստեղծված են մի շարք հասարակական կազմակերպություններ, որոնք մեծ աշխատանք են տանում ինչպես Եգիպտոսի հայ գաղութը՝ հոգևոր-

ի վիճակի մեջ դնելու, այնպես և վառ պահելու մեր ժողովրդի հայրենասիրությունը։

Մամբրե սրբազանը հատկապես մեծ աշխատանք կատարեց հայրենական նիրկա պատերազմի շրջանում։ Արձագանքելով Ա-

մենայն Հայոց Հայրապետության Աղգընտիր Տեղակալ գերապատիվ Տ. Դեմոսթ արքեպիսկոպոս Զեորեքչյանի Հայրենասիրական կոչին Կահիրեում և Աղեքսանդրիայում նոր մի քանի անդամ կազմակերպել է հանգանակություն «Մասունցի Դավիթ» հրաստյլի Ֆոնդի համար։ Հարկ չատանում իր եղած ժամանակ նա աշխատեց հոս դյուրացրեց Ադիս Աբեբայի մեր փոքրիկ, բայց հայրենասեր համայնքի հայրենասիրական ձեռնարկումները։

Մամբրե սրբազան հայրենասեր, եկեղեցասեր, ժողովրդասեր հոգևորականն է և իր այդ լավագույն հատկությունների համար սիրված է ժողովրդի լայն խավերի կողմանում։

ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԺՈՂՈՎԸ

Ս. Թ. հունվարի 31-ից մինչև փետրվարի 2-ը Մոսկվայում գումարվեց եպիսկոպոսների 1944 Թ. նոյեմբերի 23-ի ժողովի որոշմամբ հրավիրված Ռուսական Ուղղափառ եկեղեցու ժողովը Մոսկվայի և ամբողջ Ռուսիայի Պատրիարք ընտրելու և Ռուսական Ուղղափառ եկեղեցու կառավարչության կանոնադրությունն ընդունելու համար: Ժողովի աշխատանքներին մասնակցում էին Լենինգրադի և Նովգորոդի Մետրոպոլիտ Ալեքսիյը, Կրուտիցայի Մետրոպոլիտ Նիկոլայը, Կիևի և Գալիցիայի Մետրոպոլիտ Իոանեը, Հյուսիս-Ամերիկյան և Ալեուտյան Մետրոպոլիտ Վենիամինը, 41 արքեպիսկոպոս ու եպիսկոպոս և ծխական հոգևորականության ու ծխականների 126 ներկայացուցիչ:

Որպես պատվավոր հյուր ժողովին ներկա էին Ալեքսանդրիայի Պատրիարք Երիստոֆոր Երանելին, Անտիոքիայի և ամբողջ Արևելքի Պատրիարք Ալեքսանդր Երրորդ Երանելին, համայն Վրաստանի Պատրիարք կաթողիկոս, պատրիարք սրբազնադույն Կալիստրատ Երանելին, Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքի ներկայացուցիչ Ծիատիրի Մետրոպոլիտ Գերմանոսը, Երուսաղեմի Պատրիարքի ներկայացուցիչ Սեբաստիայի արքեպիսկոպոս Սֆինուտրը, Սերբիայի Ուղղափառ եկեղեցու Սինոդի ներկայացուցիչ Սկոպլյեի Մետրոպոլիտ Իոսիֆը, Ռումինական Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչ Արժեշի եպիսկոպոս Իոսիֆը և նրանց ուղեկցող մետրոպոլիտները, եպիսկոպոսները, սարկավագները ու այլ անձինք:

Ժողովը բացվեց մաղթանքով և ժողովի նախագահ, Պատրիարքի Տեղապահ Լենինգրադի ու Նովգորոդի Մետրոպոլիտ Ալեքսիի ներածական ճառով:

ՍՍՌ Միության կառավարության անունից ժողովը ողջունեց ՍՍՌ Միության Ժողովրդական Կոմիսարիատի Ուղղափառ եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ Գ. Գ. Կարպովը:

Մետրոպոլիտ Նիկոլայի առաջարկով ժողովը միաձայն ընդունեց ՍՍՌ Միության կառավարությանը ուղղված մի դիմում:

Ժողովը լսեց Պատրիարքի Տեղապահ Մետրոպոլիտ Ալեքսիի զեկուցումը Հայրենական մեծ պատերազմի օրերին Ռուսական Ուղղափառ եկեղեցու ցուցաբերած գործունեության մասին և համապատասխան որոշում ընդունեց: Ժողովը քննարկեց և միաձայն ընդունեց Ռուսական Ուղղափառ եկեղեցու կառավարչության կանոնադրությունը և լսեց հետևյալ զեկուցումները.

Մանդատային հանձնաժողովի զեկուցումը ժողովի կազմի մասին և Ուղղափառ Աստվածաբանական Ինստիտուտի Ռեկտոր Ավագերեց Տիխոն Գոպովի զեկուցումը հոգևոր ուսումնական հաստատությունների մասին:

Այնուհետև ժողովը ձեռնամուխ եղավ Մոսկվայի և ամբողջ Ռուսիայի Պատրիարքի ընտրությանը:

Ժողովը միաձայն Մոսկվայի և ամբողջ Ռուսիայի Պատրիարք ընտրեց Պատրիարքի Տեղապահ Լենինգրադի և Նովգորոդի Մետրոպոլիտ Ալեքսիին:

Ժողովը ընդունեց աշխարհիս բոլոր քրիստոնյաներին և Ռուսական Ուղղափառ եկեղեցուն ուղղված մի դիմում:

Փետրվարի 4-ին Աստվածահայանության Պատրիարքական Մայր Տաճարում հանդիսավոր պատարագից հետո տեղի ունեցավ Մոսկվայի և ամբողջ Ռուսիայի նոր ընտիր Պատրիարքի աթոռակալությունը:

(Սովետական Հայաստան, 1945 Թ. 21 փետրվարի, № 29 (7383)

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

Շնորհավոր նոր տարի, շնորհավոր նոր օրեր, 1945 թվականն իսկապես նոր տարի է լինելու աշխարհի բոլոր ազատասեր ժողովուրդների համար։ Մեր Մեծ Միության բոլոր ժողովուրդները, որոնց մեջ ևս հայ ժողովուրդը, դաշնակցած աշխարհի մյուս երկու հզոր երկրների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Անգլիայի ժողովուրդների հետ, ահա, քանի տարի է պատերազմ են մղում մեր ժամանակների անարգ բռնակալ Հիտլերի, նրա արդահատելի արբանյակների և սրանց մարմնացումը ներկայացնող ֆաշիզմի քարոզած բարբարոս ու մարդատյաց գաղափարների դեմ։ Երկու տարի առաջ, երբ մեր քաջարի Կարմիր Բանակը Ստալինգրադի մոտ ջախջախիչ հարվածներ հասցրեց գերմանական գազազած ու լիտիացած զորքերին, սկսեց թեքվել բռնակալի ատողը և երկու տարվա ընթացքում արագորեն իջավ համարյա մինչև հորիզոնի ծայրը, ու մոտ է այն ժամը, երբ նա իսպառ կչքանա այդտեղից։ Այսպես է պատմության ահեղ դատաստանը։

Անցած երկու տարիները հաղթական տարիներ են եղել մեզ համար, որովհետև ոչ միայն մեր Մեծ հայրենիքի սրբազան հողը լիովին մաքրել ենք արևմուտքից ներխուժած նոր ժամանակների վանդալներից, այլև կրնկակոխ հետապնդելով նրանց արդեն թափանցել ենք քուն իսկ Գերմանիայի հողը փութացնելով նրանց անխուսափելի և մոտալուտ անկումը։ Միևնույն ժամանակ մեր դաշնակիցներն էլ արևմուտքից և հարավից սեղմելով շտապեցնում են այս մեծ պատերազմի արագ վախճանը՝ ներկա 1945 թվականին։ Անկասկած է, որ պատերազմը չուտով կվերջանա և խաղաղություն նորից կիշխի աշխարհում, երկարատև մի խաղաղություն, որին այնքան անձկանոք սպասում են աշխարհի բոլոր ազատասեր ժողովուրդները։

Այս ահեղ պատերազմը մի քննություն էր խաղաղության համար պայքարող ժողովուրդների համար։ Մասնավորելով մեր խոսքը մեր մեծ Միության ընտանիքի մեջ մտնող հայ ժողովրդի վրա պետք է ուրախությամբ արձանագրենք, որ նա այս անգամ ևս պատվով կատարեց պատմությունից իրեն բաժին ընկած դերը։ Աղատության համար մղված այս մեծ պատերազմում հայ ժողովուրդը հավատարիմ մնաց իր փառապանծ նախնիքների սրբազան ավանդներին և իր կատարած սխրագործություններով անթառամ պսակով պսակեց իրեն։

Եվ իրոք, ի՞նչ է ներկայացնում երեք հազարամյա հարուստ անցյալի ամբողջ պատմությունը՝ հայոց պատմությունը, եթե ոչ կռիվ, պայքար, պատերազմ հայ ժողովրդի անկախությունը, հայրենիքի սահմանները պաշտպանելու և պահպանելու համար։ Ահա անցյալի խորքից հարություն են առնում և մեր աչքի առաջից անցնում մեր մեծ նախնիքը։ Մի հուզիչ զուգադիպությամբ ազատության համար մղված պայքարով է սկսվում մեր անցյալի պատմությունը։ Մեր ազգության հիմնադիր վայելչակազմ և թիկնավետ, խաժակն Հայկ նահապետը ազատության դրոշը պարզած կռիվ է հայտարարում հարավից իր վրա արշավող հսկա բռնակալ Բաբելոնյան Բելի դեմ և հաղթում նրան, իր նորակազմ ցեղի համար ապահովելով հայրենիք և ազատություն։ Ահա նրանից դարեր հետո Արյաքունյաց դահի վրա բազմած փառապանծ Տիգրան Բ-ը, տեսնելով արևմուտ-

քից դնալի իր երկիրը սողոսկող, Հայաստանի ազատությունն ու անկախությունը վտանգող գոռող Հոմի լեգեոնները, պատերազմ է հայտարարում նրանց ու երկար ժամանակ փոփոխակի բախտով զբաղեցնում և ուժասպառ անում նրանց, հետևորդ սերունդների մեջ հերոսի, ժողովրդական դյուցազնի տիպար հանդիսանալով։ Ի՞նչպես չհիշենք սեդ Տրդատին, որ իր հայրենիքի վրա բռնացող Թշնամիների դեմ պայքարի է նետվում և իր հուժկու և քաջարի բանակներով Հայաստանը հետ նվաճում արևելքից միշտ սպառնացող բռնակալների ձեռքից։ Նույն դերումն ենք տեսնում հայոց արքա Արշակ Բ-ին, որը հանուն հայ ժողովրդի ազատության և անկախության բազմաթիվ պատերազմներ է մղում նույն արևելքից սպառնացող վտանգի առաջն առնելու համար։

Վերջանում է Արշակունյաց հարստությունը, բայց հայ ժողովրդի մեջ միշտ վառ են մնում դյուցազն նախնիքների հիշատակները, անունները, նրանց կատարած գործերը։ Եվ երբ 5-րդ դարի կեսին նույն Սասանյան տոհմը, օգտվելով Հայաստանի անգլուխ լինելուց, փորձում է դիպչել հայ ժողովրդի անկախությանը, նրա մտքին, հոգուն և սրտին հայ ժողովրդի հերոս զորավարները անվեհեր սպարապետ Վարդան Մամիկոնյանի առաջնորդությամբ ժողովրդական բանակի գլուխ անցած դուրս են գալիս պարսից վարձկան զորքերի դեմ և Ավարայրի ճակատամարտում կանգնեցնում բռնակալ Հազկերտ Բ-ի բանակները, ստիպելով նրան ընդմիշտ ձեռք քաշելու իր չար մտադրություններից։ Այդ ժամանակից քիչ անց նույն Մամիկոնյան տոհմի չտատիպ զորավար Վահանը բազմաթիվ մեծ ու փոքր կռիվներով իսպառնում է Հազկերտ Բ-ի հաջորդների մուտքը Հայաստան և ապահովում հայրենիքի ազատությունը։

Ընկնում է Երբեմնի հզոր Պարսկաստանը։ Նրա փոխարեն յոթերորդ դարի կեսերին հարավից նոր բռնակալներ են հայտնվում, որոնք տրյունով, հրով և սրով արշավելով մեր հայրենիքի ու մեր ժողովրդի վրա փորձում են նրա ըմբոստ ոգին ընկճել, ստրկացնել, բայց այդ բանը նրանց չի հաջողվում։ Այդ ժամանակը ծնել է այնպիսի հերոսական դեմքեր, ինչպես են Հոմանը, որ ջախջախիչ հարվածներ է հասցնում մեր հայրենիքի թշնամիներին, Սասունցի Դավիթը, մեր ժողովրդական հերոս դյուցազնը և ուրիշները, որոնք երկարաղարեր ոգեշնչել են մեր ժողովրդին մեր հայրենիքի անկախության ու ազատության համար մղված պայքարում և բռնակալներին ստիպել ճանաչելու մեր երկրի անկախությունը։ Այսպես, արաբական բռնակալները հարկադրված եղան ճանաչել նոր իշխանական տոհմի՝ Բագրատունյաց ազատ և անկախ դեկավարությունը Հայաստանում։

Սրանց անկումից հետո էլ հայ ժողովուրդը դարձյալ ճանապարհներ է որոնում իր անկախ գոյությունը պահպանելու համար և ահա մի խումբ կորյուն իշխաններ քաշվում են հեռավոր Կիլիկիա, Տավրոսի բարձունքները և այնտեղ սեփական հայկական թագավորություն հաստատում, որը 300 տարի գոյություն ունեցավ։

Կիլիկիայի թագավորությունն էլ ընկավ, բայց հայ ժողովրդի ազատության, սեփական իշխանություն ունենալու տենչը վառ մնաց, նրա ըմբոստ ոգին միշտ որոնումներ էր կատարում ուժեղ թափով արտահայտվելու համար։ Այդ ոգին էր որ ոտքի հանեց Սյունեցի Դավիթ Բեկին, Սյունիքի ազատ լեռներում մեծացած հարազատ դավակին, որը իր մի խումբ համախոհների հետ կռիվ է սկսում իր երկրի հարստահարիչների դեմ և կարճ ժամանակում բոլորին ոչնչացնում։ Նրանից հետո էլ մեր երկրի դանդաղ մասերում միշտ բռնկումներ են եղել օտարների դարձելի լուծը թոթափելու համար։

Հայկական իշխանական տների անկումից հետո մեր բարձր հոգևորականների

միջից էլ դուրս են եկել անհատներ, որոնք մարտնչել են իրենց ժողովրդի ազատության համար։ Հիշենք Ներսես Աշտարակցուն և Դրիգոր Նպիս. Մանուչարյանին, որոնք հայկական դնդերի դրոշի անցած օգնել են ռուսական բանակին տարդարների անարդ տիրապետությունը վերջ տալու համար Հայաստանում։ Սուլթանական Տաճկաստանում էլ հայոց պատրիարքները հոգևորականի սքեմի տակ ստիպված են եղել բողոք բարձրացնելու հայ ժողովրդի նկատմամբ գործադրվող հարատևարությունների դեմ։ Այդպիսիներից էին Երզրումյան Հայրիկն ու Մատթեոս Բ. Իզմիրլյանը, որոնք արյունածարավ սուլթան Աբդուլ Համիդի կողմից Երուսաղեմ աքսորվեցին։

Ունենալով այսպիսի հարուստ անցյալ, զմայլվելով անցյալի ժողովրդասեր այս դեմքերով, մենք հպարտությամբ արձանագրում ենք, որ ներկա ահեղ պատերազմում Կարմիր Բանակի շարքերում հերոսաբար մարտնչում են մեր ժողովրդի հարազատ զավակները, որոնք ցուցադրում են փառկան հերոսություն, ապշեցուցիչ սխրագործություններ և վարքով ու պատվով պահվում ինչպես մեր բարձր դինվորական իշխանության, այնպես էլ մեր Միության բոլոր ժողովուրդների կողմից։

Հայ ժողովուրդն իրավամբ պարծենում է իր ռազմիկ զավակներով և ամեն հնարավոր աջակցություն ցույց տալիս նրանց պատերազմը հաղթելու, որովհետև դրանից է կախված մեր ապագա մեծ բարգավաճությունը։ Հայ ժողովուրդը թիկունքում օգնություն է ցույց տալիս ոչ միայն ճակատում մարտնչող Կարմիր Բանակի մեր մարտիկներին, այլև մեզ մոտ Հայաստանում թողած ընտանիքներին, թե՛ նյութապես և թե՛ բարոյապես։

Բայց հայ ժողովուրդը միայն սովետական Հայաստանում և մեր Միության եղբայրական ռեսպուբլիկաներում չի բնակվում. նա մեծ թվությամբ ապրում է նաև Մերձավոր Արևելքում, Եվրոպայում, Ամերիկայում, այնքան այն երկրներում, որոնք մեր Մեծ Միությանը հետ դայնակցած կենաց և մահու կռիվ են մղում միջնադարյան խավար ու ռեակցիոն ուժի՝ մարդասիրոշ Հիտլերի դեմ և բնական է, որ հայ ժողովրդի այս հատվածն էլ շահագրգռված է, որ պատերազմը ավարտվի շուտ և մեր հաղթանակով, որ ըղձալի խաղաղությունը վերականգնվի աշխարհում, ճանապարհների երթևեկությունը հեշտանա և շփումը Մայր Հայրենիքի հետ աշխուժանա։ Հենց այս հանգամանքն էլ պատվավոր պարտականություն է դնում Սփյուռքի հայության վրա, որ իր լայն աջակցությունը ցույց տա թե՛ նյութապես և թե՛ բարոյապես։

Մեր Հայրենիքն ամեն մի դոհաբերում է ճակատի մարտիկների համար։ Այդ զոհաբերությանը մասնակցում է նաև Սփյուռքի հայությունը, որովհետև նա դպստորեն ի ըստ արժանույն գնահատում է, որ ներկա աշխարհասասան ահեղ պատերազմում Հայաստանը շնորհիվ մեր մեծ Միության և նրա հանճարեղ Առաջնորդի իմաստուն ղեկավարության անմիաս մնաց պատերազմի արհավիրքներից և չարունակեց իր ստեղծարարությունն ու զարգացումը՝ համոզված մեր արդար գործի հաղթական ավարտին։

Այժմ այդ ավարտը մոտ է, և շատ է մոտ։ Նենգ թշնամին շուտով կջախջախվի անդառնալիորեն և արմատահան ինչպես մյուս ժողովուրդները, այնպես էլ հայ ժողովուրդը էլ ավելի մեծ թափով կլծվի իր չինարար աշխատանքին, այն խորը գիտակցությամբ, որ իր խաղաղությունն այլևս ոչ ոք չի հանդգնի վրդովել։

Այս հուսատու, մոտալուտ, բերկրալի ապագան թող ջերմացնի մեր բորբոս սրտերը, վեր հանի մեր լավագույն, մեր բնատուր ընդունակությունները, որոնցով գինված թևակոխենք նոր թվականը, դարձնելով առաջխաղացության մեծ դրոշ ապագա սերունդների համար։

Շնորհավորում ենք այս բերկրալի 1945 թվականը։

ՀԱՅԿԱԿ ԴՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅ-ԼԱՏԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՒՅՆ-ԼԱՏԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆՑ ԼՈՒՅՍՈՎ

Ա.

«Տառապալից երկու հազար տարիներ չկրցին եղբեմ եղծել Ցոյներու ազգային Ոգեսքազիրը ու եղծել ազգային արժանապատուութիւնին։ Կարելի չէ արհամարհել պատմութիւնը ժողովուրդի մը, որ դարերու ընթացքին պահած է իր լեզուն և իր ազգային ոգին և անկոխ պետութիւն մը կազմելու կարող բաւական հերոսօր վերանորոգուած կարով մը։ Իր գերութեան երկար տարիներուն Ցունաստանի կեանքը երբէմ ալ այլասերուած ժողովուրդի մը կեանքը չեղաւ։ Ցունաստանի պատմութիւնը շատ հանգիստութիւններ կրնծայէ, արդարև, հայոց և վրաց պատմութիւններուն հետ»։

George Finlay

Սէր ազգային պատմութեան ավելի քան երկու հազար տարիներ ընդգրկող ընդարձակ ժամանակին մէջ Կիլիկյան թագավորութեան պրսված շրջանը (1080—1375) գրեթե ամբողջ երեք դար իր կրոնական, քաղաքական, մատենագրական, արվեստի և վաճառականական զարգացման տեսակետով կներկայացնե վերին աստիճանի չահեկան շրջան մը, հարուստ ներքին, անմիջական դրացի և արտաքին բազմաթիվ ազգություններով։ Այս շրջանին է, առաջնապես, որ արևմտյան Եվրոպա կսկսի հաստատել հայ պետական կազմի և հայ արձր կդերականութեան հետ, ընդհանրապես Հռոմ կամ Ավինյոն նստող պապերու և ասոնց Եվրոպական՝ միջոցով։ Հայ-Եվրոպական հարաբերութեանց զարգացման կնպաստեն աշխարհական պատմութեան ամենեն կարևոր հանգրվաններեն մեկը Կաղմոզ Խաչակրաց արշավանքները։ Երուսաղեմն ու Պաղեստինի քրիստոնեական դլխավոր սրբավայրը օտարներու լուծեն ազատագրելու մտադրութեամբ Եվրոպայի ճամբա ելլող ու Կ. Պոլսի վրայով Փոքր Ասիա ու ասա Կիլիկիա ժամանող խաչակիրներ, իրենց ասպետներով ու քահանաներով ու անկազմակերպ ամբոխով կհարաբերեին հայ թագավորին, կղերին, բերդատար իշխաններուն և հայ առևտրականներուն հետ։ ԺԱ դարու առաջին կիսուն իսկ Կիլիկյան Հայաստան իր արքունիքով ու հայրապետական դարպասով ու իշխաններով ուշադրությունը կդրավե Հռոմի, իտալական երկու կարևոր հանրապետություններուն՝ Վենետիկի և Ճենովայի դլխավոր մայրաքաղաքներու դինվորական և առևտրական շրջանակներուն։ Ժամանակի ընթացքով այս հարաբերությունները մեկ կողմե կմշակվին անձնական շփումներով և պատվիրակությանց և դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչներու անվանումով ու կդարձանան դրավոր թղթակ-

---

[1] A History of Greece from its conquest by the Romans to the present time B. C. 146 to A. D. 1864.

ցությամբ և պապական ու թագավորական հրովարտակներու և առևտրական դաշնադրներու խմբագրությամբ և փոխանակությամբ, որոնց ամբողջությունը բավական ընդարձակ տեղ ունի հայ և օտար մատենագրաններու, արխիվներու և բազմերանգ ատենագրությանց մեջ։ Դիտական նորագույն հետազոտություններ ջանացած են բուն ըմբռնումներով և տարակարծություններով բարդ վիճակ մը ներկայացնող պատմական բոլոր տվյալները հստակ լույսի մը տակ մեկնաբանել ու երևան հանել միջին դարու հայ-լատին հարաբերությանց իսկական բնորոշ նկարագիրը, մեկ կողմն պարզելով ասյն հարաբերությանց ճշգրտորեն հետապնդած նպատակը և մյուս կողմն ի հայտ բերելով գրեթե իր ամբողջ պետական ու եկեղեցական նվիրապետությամբ ինքզինքը այդ հարաբերությանց մեջ նետող հայ ժողովրդին իսկական հայացքը ու տրամադրությունները մեծ Հայաստանի ու Կիլիկիոյ մեջ։ Մեր ներկա ուսումնասիրության նպատակը պիտի ըլլա առանց կրոնական ու դավանաբանական բանավեճերու, հայ-լատին հարաբերությանց մեջ պատմական նորագույն տվյալներով ողջմտորեն ուրվագիծ պատկերը տալ կողմերու տրամադրություններու, միանգամ ընդմիշտ, եթե ներելի է այսպես ըսել, հերքելով այն բոլոր վերագրումները որոնք կուգան ոչ այնքան օտար ամբիոններեն, կամ կաճառներեն, այլ կուգան ինքզինքին Կիլիկիո իշխանական տուներու և կաթողիկոսական դարպասներու և նուիրեալ ավելի առաջ Երեսուն Ս. Լուսավորչի ու Ս. Մահակ ու Ս. Մեսրոպի ուղղակի ժառանգորդները համարող մեր լուսամիտ և հեռաքնին ու ազգասիրական բանասիրության պարապող ծերայրենիներեն։

Կանխեցի վերագույն ըսելու, որ տեղական պատմության ամենեն կարևոր չրջաններեն մեկը կազմող Մաշակրաց պատմությունը վերջին քառորդ դարու ընթացքի, առանց հիշելու կանխագույնը, մատած է բոլորովին նոր բովի մը մեջ, որ իր կարգին կարող է լուսաբանելու Մաշակրաց արշավանքներու իսկական շարժառիթը և անոնց ձգած հետքերը Արևելքի քրիստոնեից և մասնավորաբար բյուզանդական ու հայկական պատմությանց նույն չրջանը չոչափող էջերուն վրա։

Կիլիկիո Այսպ լերանց կողերուն վրա ու կիրճերուն մեջ կանգնած վանքերու հայ վանականներուն համար Մաշակրաց արշավանքները բոլորովին մարդասիրական, սիմբոլիք շարժում մը չէին, և անոնք այդ շարժումեն չատ բան ակնկալելու պետք չունեին և ոչ մեկ ազգ, պիտի ղրեր հետագային Գրիգոր ԺԳ-րդ պապ, ինքնակամ կերպով օգնության փութաց Մաշակիրներուն, որքան հայերը, որոնք Մաշակրաց մարդ, մի, զենք և պաշար հայթայթեցին[1]։ Բայց Հռոմի կամ Ամինյոնի պապերուն և Վենետիկի ու Ճենովայի դուքսերուն ազդեցությանը ասպավինող վաճառականներուն համար Մաշակրաց ծրագրին ու գործադրությունը ուներ թաքուն նպատակներ, որոնք այլևս ծածկված մնալու ուժեն բոլորովին ասատագրված են բաներահատորաբար։ Ու եթե Մաշակրաց բանակներու և անոնց ասպետներուն ներկայությունը Կիլիկիո ներքին ու ծոցեղեալ կենտրոններուն մեջ հայեցանան կարող մը վարձի փառասիրությունները արթնացնելու առիթ տվավ, տոդար պիտի բլլա դանոնք վերագրել ասպետական ոգիով հարուստ հայրենասիրությունը մը, որուն մարդին հաճախ կհայոցին հատնի, ի գին տկարամիտ զոհողությանց։ Ատր ոչ նուազ ատատարել եկամ Իմրոատրի համար Կիլիկիո ատիարհատուտեան նպատավոր դիրքը, բլլալով ինքնին բնական նամուրջ մը, արևելյան և արևմտյան առևտրական փոխադարձ հարաբերությանց միջև։ Նույն դարերուն ու գեռ մինչև ցայսօր։ Մեկմեն չատ ավելի հզոր ու եռամեկուսված Բյուզանդական կայսրությունը, իր կայսրերով, արևելյան պատրիարքնե-

[1] Jacques de Morgan-Histoire du Peuple Arménien, 1919, էջ 169.

րով, զորապետներով ու արքայազուն իշխաններով ու մեզմե ավելի տկար բուլգարներ ու սերբեր իրենց թագավորով ու բարձրը դասու եկեղեցականներով ու մեզի դրացի ասորիներ ալ իրենց կղերով ու ավագներով մեզմե շատ ավելի լայն կերպերով մինչև Հռոմ ու Եվրոպական արքունիքներ ապ առին իրենց անձկության ժամերուն, բայց ոչ Հունաստան, Խուլգարիա, ոչ Սերբիա կաթոլիկ դավանությունը ընդունեցին և ոչ ալ այս ժողովուրդներուն մտավորական դասը փորձեց հաստատել որ իրենց նախնիքները հուդիզ դավանության պիրեր տուած ըլլալով Հռոմի պապերուն կամ առանց նվիրակներուն, ընդունած էին հռոմեական եկեղեցու հովանավորությունը, Կ. Պոլսոյ կամ Բյուզանդիոնի Արևելյան պատրիարքությունը ոչ միայն հույն կամ հելլեն ժողովուրդներուն հոգևոր նվիրապետությունը կմարմնավորե ու Աղեքսանդրիոյ, Երուսաղեմի ու Դամասկոսի հույն պատրիարքությանց հետ կրնա ապահովել Արևելյան հունադավան եկեղեցվո միասնականությունը, այլև մինչ չուրջ ութսուն տարի առաջ կհավանավորեր հունադավան բարմաթիվ հանդիսքներ ու ազգեր։ Պարապան բացարձակապես նույնն է նաև հայ եկեղեցվո համար ալ։ Զուր ջանք և ավերորդ ու անօգուտ վատնում է չարունակել պնդել, որ հայ եկեղեցին իր կղերով ու արքունիքներով հինեն ի վեր քաղկեդոնիկ եղած է ու Կիլիկիո արքունիքն ու կաթողիկոսարանն ալ ընդունած են հռոմեական եկեղեցվո գերագահությունը ու կաթոլիկ դավանությամբ կապված Հռոմի։ Նման համոզում մը ավելորդ ժամանակավրեպ մըն է այլևս և տեղ չունի ու պետք չէ որ ունենա ոչ հայ ատար ու հաստատմն գանգվածներուն մեջ, և ոչ ալ ազգային կամ օտար լուսավորված մըտքերու մեջ։

Գրեթե երեք դարու ազգային կրոնական, սեռական մատենագրական, ճարտարապետական ու գեղարվեստական այնքան ներշնչող կյանք ու գործունեություն ունեցող Կիլիկիան այսօր քանի մը հարյուր ձեռագրներ մնացած են միայն, բազմաթիվ մատենագրություններու մեջ գրված ու նույն չափով ալ ոսկի, արծաթ ու պղինձ գրամներ։ Մնացյալ հիշատակարանները, կիսափուլ կամ փոշիացած վիճակով, կաբուսնակեն դեռ վկայել մեր ցեղի գյուղացնությյան և ստեղծագործության։ Բայց ինչ որ կա վերջապես, գրչություն ու արվեստ, անոնց և ոչ մեկը կրնա դույզն չափով մը իսկ հաստատել բոլոր այն չարամիտ վերագրումները, որոնց համեմատ Կիլիկյան իշխանության երբեմն փայլուն ու երբեմն տմուր շրջանը ուղղի ճանչցվել իբր լատինացած ու օտարացած շրջան մը։

Ժամանակի պահանջներուն հարմարիլ գիտնալու խոհեմ քաղաքականությունն էր որուն հետևած են արքունիք ու հայրապետանոց, առանց կեղծելու հայ ազգային ու եկեղեցական–կրոնական հաստատուն նկարագիրը։ Մեր և մեզի հետ չատերու տեսած ու քննած Կիլիկյան հարյուրավոր ձեռագրերը ուղիղ չարունակություն են, բովանդակությամբ և արվեստով, թ–ժ դարերու մեջ գրված ու ծաղկված հայաստանյան ձեռագիրներուն, ուր լատին կամ եվրոպական արվեստի ոչ մեկ նշույլ, ոչ մեկ հետք գնչմարվի։ Ու պետք է քաջատիրտ ըլլալ ընդունելու համար, որ մեր Կիլիկյան ձեռագիրներուն մեծագույն տոկոսը արդարիր ընծաներն են լատինամետ կարծված կաթողիկոսներուն, թագավորներուն և եվրոպական սովորություններուն հակամետ բերդատեր փչխաններուն ու զանոնք գրող ու ծաղկողներն ալ դարձյալ «հռոմեադավանց» կարծված վանական վարդապետներ են և քահանաներ։ Կիլիկիո հարյուրե ավելի վանքերուն մեջ ուր հազարավոր ձեռագիրներ գրվեցան ու ծաղկվեցան ժողովրդի կրոնական ու իշխանական ու լուսամիտ դասակարգերուն համար, անխափան, առավոտյան, մինչօրյա, երեկոյան ու գիշերային ժամերուն հայ եկեղեցվո դարավոր աղոթքները պաշտվեցան ու ոչ մեկ հայկական վանք իր ներքին ու

արտաքին ձևավորեց լատին վանքերու կարգ. սարքին վրա, հակառակ եվրոպական վանքերու դոյութեան ու հայ վանականին կապան ու վիզերը մնացին Գարթևի կամ Հաղբատի հարազատ տարազները։ Կիլիկյան շրջանի մանրանկարչութեան կրեց Բյուզանդական ազդեցութիւն, բայց հա-

դիվ թե վարանք լատին ազդեցութեամբ քանի մը նկար ու մանրանկարներու հանդիպիլ։ Այսքան փոկ բավական պետք էր համարվելը չդնդնելու համար քննական պատմութեան բավիղներուն մեջ, բայց մենք սիրով պիտի կատարենք այդ հոգնութիւնն ալ «ի պէտս դարձացողաց»։

Բ.

Հայ-լատին հարաբերութիւնները կարելի է նկատել իբր մեկ բնական շարունակութիւնը հայ-հունական և հայ-ասորական նախկին հարաբերութեանց։ Քրիստոնեութեան Հայաստան մուտքեն ասոնք ալ էին հայոց հարաբերութիւնները սահմանակից ազգերու և պետութեանց հետ և բնական է, որ այլ կերպ չիրավի ըլլալիր, երբ իրարու սահմանակից ազգեր լուսավորվեցան քրիստոնեական կրոնով։ Եվ որոմհետև քրիստոնեութիւնը իրը բարոյական կրոն, էր նաև ծիսական կրոն, քրիստոնյա ժողովուրդներ կամ եկեղեցիներ իրենց օկրբական կազմակերպութեան շրջանին հիմքը նույնը պահելով հանդերձ իրը հավատ և դավանութիւն, որոշ է որ ասոնց ազգաբանական հայեցողութեանց մեջ ունենային անջատ, բայց անշնաս տարբերութիւններ։ Իրողութիւնը, անկասկած այդպես պիտի չբլլար, եթե Հիսուս իր մարդկային կյանքի գլուխ վերջին տարին իր աշակերտներուն հանձնած ըլլար գրավոր ուղղութիւններ, որպեսզի անոնք իրենց առաքելութեան ընթացքին նորահաստատ քրիստոնեութիւնը համընթաց քարոզութեամբ տարածած ըլլային։ Առաքյալներու Թուղթերն ալ ընդհանուր բարձր ճշմարտութիւններն դատ դամանարանական շատ ցանցառ հրահանգութիւններ բովանդակեցին, որով յուրաքանչյուր եկեղեցի իրեն հատուկ աստվածաբանութիւնը և ծիսարանը հիմնավորեց հեղինակավոր ու գիտական հայրապետներն կազմված ժողովներու մեջ ու աստվել կամ նվազ հաստատութիւն գտնելի հետո ստացավ եկեղեցական սահմանադրութեան հանգամանք։ Դժբախտութիւն մըն է նուազեցնել հաստատել, որ Դ-րդ դարու սկիզբը կազմված և «Ֆիլեգերական» անուն ու դրոշմ ստացած հայերդական այդ ժողովները չարունակ գիրքը սրբագրելու ընդունակ ունեցան, երբ մյուս կողմե նորամուտ մոյար կամ ներհակ վարդապետութիւններ ընդհանուր ժողովներով վավերացված կարգերը խանգարելու և խոովելու հանգամանք կստանային։ Այս անխուսափելի երևույթի առջև մեկը մյուսին վրա առավելութիւններ ձեռք բերելու անօգուտ ու հաճախ վնասակար ձգտումներու ընթացքին շատ ալ անբնական պիտի չբլլար դիտել եկեղեցիներու մեջ փոխադարձ հարաբերութիւններ, ի սկզբան բարեկամական և համոզողական; բայց հետագային նվաճողական, որոնք հանգեցին եղբայրական առեյավառ մթնոլորտներու և նույնիսկ պատերազմներու։ Քրիստոնեական նորահաստատ կրոնը անխուսափելիորեն արտահայտություն պիտի գտներ գրականության և արվեստի մեջ. այս երևույթն թեև բավական էր, որ իբարու սահմանակից կամ նվաճմամբ տիրոջի և Ճորտի (vassal) դրության մեջ գտնվող քրիստոնյա ժողովուրդներ արվեստի ու գրականության դաշտի վրա իրարու հետ գործակցեին, իրարու պակասը փոխադարձաբար լրացնելու կամ իրենց սեփական ստեղծագործությունն դրացիին արդյունքովը ճոխացնելու համար։ Հարցը այս անկյունեն դիտած, ուրեմն, քնական և հետևաբար անբռնադրոս էին հայ հունական, հայ-ասորական, հայ-վրացական կամ հայ-ալվան հարաբերու-

թյունները, վասն զի իրարու սահմանակից կամ իրարու մեջ ապրելու սահմանված ժողովուրդներու եկեղեցական սահմանադրության կամ մասնագրության մեջ անհետաձգելիորեն պետք ունենին հարաբերություն, այս բանին ամենեն պարզունակ ու անմեղ իմաստովը։ Դժբախտաբար, սակայն իրեն հատուկ բնականությամբ անմեղ ու անխուսափելի նկատված այս հարաբերությունները միջին դարուն բոլորովին տարբեր կերպարանք առացան, երբ խլամությունը անարգել կտարածվեր Միջերկրական ծովու ափերանի շուրջ բոլորը հասնելով մինչև Գանգեսի և Ինդոսի հեռավոր հովիտը ու իր մեջ ներառելով ոչ միայն Արևելքը չբնակեցյալ իր նվիրական որբավայրերով, այլև Հյուսիսային Աֆրիկեի, Սպանիոյ, Սյուրիոյ, Միջագետքի ու Հայաստանի քրիստոնյա, երբեմն այնքան ծաղկյալ եկեղեցիները։ Առանցքն անոնց մասին, որ արդեն կորսված էին, անօգուտ սիրտ ըլլար մտածել. բայց կային դեռ քրիստոնեական ոչ միայն հատվածներ, այլև փառավոր անցյալ ունեցող պետություններ, ինչպես Բյուզանդական կայսրությունը, պատմական փայլուն ու օգտակար անցյալ ունեցող Ասորիքը, Կիլիկյան նորահաստատ թագավորությունը, որոնք որևէ կերպով, նույնիսկ ծանր զիջողություններով, պիտի չուզեին իրեն ալ հեթանոս դերության տակ, իրենց կորուստին մեջ կլանված տեսնելով նույնպես քրիստոնեական քաղաքակրթության փառավոր կոթողները, ինչպես որ ալ եղավ։ Երբ Հայ-յատին հարաբերությանց խորքին այս ուղղությամբ մտածենք, ազատ ու անանձնապաշտ մտադրությամբ, այլևս կարիք չի մնար ամենորդ հետևություններու։ Մայր-Հայրենիք մը կորանցնելն հետևանքը սրբազան նշխարներով փ նորս կառուցված եկեղեցիներ մը ճեռքն չհանելու կանխահոգությամբ թաղված ճեղքերը պետք է իր ժամանակին իմաստությամբ վերլուծել և ոչ թե Հռոմի գերադահության ուղղակի հպատակությամբը։ Եկեղեցին իր սա կամ նա ձևի աստվածաբանությամբը կրնար նույնը մնացած ըլլալ ու իր գոյությունը շարունակել, բայց օտար ազնության կենտրոններեն հեռու և զորավոր պետություններու հարձակման ենթակա փաքր ու տարանջատ դաղափարներով պատակված երկրի մը կրոնքը կարելի պիտի չըլլար որևէ կերպով դարմանել։

Այս ամիսի նախաբան տեսությունեն հետո այժմ մեզի պիտի մնար ուղղակի պատմության լույսովը հասատել, որ հույն օրդոտոքս եկեղեցին, որ իր բովանդակ եկեղարաձիգ պատմության մեջ մեզմե շատ ավելի անդիջող եղած է իր սկզբնական շրջանի հատատատ համոզումներուն, իր երբեմնի մեծափառ կայսրության կրոնական, գինվորական բարձր արվեստի և գրականության միջնաբերդը հանդիսացող Բյուզանդիոն մայրաքաղաքը ազատելու կանխահոգությամբ իր սարիսպներուն ու աշտարակներուն դիմաց վրան հատատատող Գոչնաքներեն և Սեչեուկներեն միությանը խնդրանք տարած է Հռոմի պապերուն և ասոնց միջոցով արևմտյան քրիստոնյա պետություններուն, զինվորական օգնության աղերսով։ Հայ-յատին հարաբերությանց իրը նախադուռ ցույց կտրվի Գրիգոր Էրդ Հելդեբրանդոս պապի 1080 հունիս 24 թվին Գրիգոր Բրդ Վկայասեր կաթողիկոսին ուղղյալ անվավեր նամակը դավանաբանական քննադատող հանձնարարությանց բովանդակությամբ։ Եթե Գրիգոր Բրդ Վկայասեր Կ. Գոլսեն հետո Հռոմ ալ գնաց, կրնա գուցե անձնական հետաքրքրության համար դացած ըլլալ, ինչ որ ներկայիս ալ մեր եպիսկոպոսներն շատեր հետաքրքրության համար դացած են, այլապես ազգային աղբյուրներ պետք է որ հիշած ըլլային այդ այցը, եթե երբեք պաշտոնական բնույթ ուներ ան։ Այս միջոցներուն արդեն Կոստիանդի Ռուբինյանց խշխանությունը Փեռունի Վասիլյան խշխանության հետ շարունակ չփման մեջ էր Անտիոքի և Եդեսիոյ լատին խշխանությանց հետ, ուր կար յին հայ դաղթականություններ և ազատ

դասակարգ գինվորական անձեր, որոնք ֆրանկ կամ լատին դունդերուն հետ կպատերազմին այլազգիներուն դեմ։ Նախապես ալ հայ ազատ դասակարգ գինվորականներ Բյուզանդական բանակին մեջ մըտնելով ու իրենցմե շատեր մինչև իսկ կարևորական դահ բարձրանալով կռված էին այլազգիներու դեմ և պատահած ալ է, որ անոնցմե շատեր հունադավանություն ընդունելով ամուսնացած են հույն օրիորդներու հետ և փոխադարձաբար հույն սպա և գինվորներ ալ ամուսնացած են հայազգի օրիորդներու հետ, բայց հայ եկեղեցին, հակառակ ժամանակի դավանափոխությանց, ինչպես է պարզուն զոր օրինակ հայ-հունականներու համար, պահած է միշտ իր անկախ և յուրահատուկ դիրքը։ Այն ձևով, որ Ե—է դարերուն, բյուզանդական կայսրության արքունի և գինվորական պաշտոնատարներ Հայաստանի մեջ գանազան բարձր պաշտոններ դրավեցին, մինչև դարուն ալ արևմտյան Եվրոպային մեծ թիվով օտարականներ բյուզանդական արքունիքի մեջ հաստատվելու ձգտան։ Արևելքը Եվրոպայի կրոնականներուն, քաղաքական ու պետական դեմքերուն, զորապետներուն ու բարձր առևտրականներուն համար շահու. և հանգստի հիանալի տուրք մըն էր, ինչ ասենք, ազդեցությանց և միջնորդությանց շնորհիվ, ինչպես բյուզանդական կայսրության, նմանապես ալ Կիլիկյան արքունիքի մեջ ամենեն բարձր, շահավետ ու հանգրաստավետ պաշտոնները կգրավեին։ Այսքան մը մերձավորություն բնական է, որ այլ հետևանքներ ալ առաջացներ։ Կ. Պոլսոյ ու Սիսի արքունիքներուն մեջ նստող հույն և հայ իշխան, թագավոր ու բերդատերներ գունդստապլ, մարշալ, սենեսկալ, պարոն, պայլ օտարամուտ տիտղոսներով պիտի ուզեին ամուսնանալ Եվրոպական արքունիքներու մեջ իրենց գեղեցկությամբն ու ազդեցության շրջանակովը փայլող իշխանուհիներու հետ և մենք գիտենք, թե նման խառն ամուսնություններ որքան նպաստավոր են հայ-լատին կամ հույն-լատին կրոնական մտերմիկ հարաբերությանց գնտին պատրաստելու։

Արքունական կազմը արտաքնապես զորեզացնելու շատ գործնական սատար մըն է իշխան և իշխանատներուն օտար արքունիքներուն հետ ամուսնական խնամությունը, սովորություն, որ դարերե ի վեր անխափան շարունակված է, իր կարգին նպաստելով միջազգային դաշնակցության կնքումին։ Ռուբեն իշխանապետ, երբ իր նորակազմ պետությունը քրիստոնյա պետությանց բարյացակամ ուշադրության առարկա դարձնելու մտադրությամբ իր հայացքը լատիններուն կողմը դարձուց ու 1181-ին Երուսաղեմ ուխտի գնաց, հոն խնամություն հաստատելով լատիններուն հետ, ամուսնացավ Քարաքայ և Թորոնի իշխան Հիմֆրիին Իզաբել աղջկան հետ։ Իրմե հետո, Լեվոն լատիններուն հետ սկսված բարեկամությունը ամրապնդելու հույսով ամուսնացավ Անտիոքի Բոյեմոնդոս իշխանի աներորդուն աղջկան հետ, որպեսզի տիկինը իր ազգականներուն ուժով Լեվոնի պաշտպան դառնա։

Ինչպես բյուզանդական արքունիք և բարձր գինվորականության մեջ, այնպես ալ Կիլիկիոյ թագավորական ու բերդատեր իշխաններու արքունիքներուն մեջ արևմուտքի բարքերը ընդօրինակելու հիմնական տրամադրություն մը կը տիրեր, ըլլալով համոզված հիացողներ Արևմուտքի քաղաքականության։ Հույն և հայ իշխան ու բերդատերերը իրենց հարացույց ընտրած էին արևմտյան ավատական ասպետները։ տիպարը ու ինքզինքին տված համբույրի, ընդունելությանց, մեծամասս հանդեսներու, որսի և արևմտյան ձևով շրջանային այցելություններու ու բորբ ասենք հետևեան պիտի նպաստեին հայ-լատին կրոնական հարաբերությանց զարգացումին, իբր պրոպագանդի ազդակներ Կիլիկիոյ արքունիքին և կղերին մեջ։

Հայ-լատին և հույն-լատին հարաբերությունները ամրացնելու և լատինասիրությունը այս երկու պետությանց եկեղեցական և արքունի ավագ շրջանակներու

մեջ տարածելու դիտումով երկուստեք ծրագրված այս խառն ամուսնութիւնները երբեք ալ հաջտ աչքով չդիտեցին իրենց կրոնական զգացումներուն և ավանդութեանց մեջ ամուր կեցող հայ և հույն քարեպաշտներ։ Ինչպես բյուզանդական կայսրութեան մայրաքաղաքին, այնպես ալ Կիլիկյան մայրաքաղաքի զավառային ու նույնիսկ գեղջկական բոլոր շրջանակներուն մեջ դժգոհութիւնն ու ցասումը այնքան սաստկացավ, որ ներքին վտանգ մը կարմելու աստիճանին հասավ և սատարեց պետական ու զինվորական կազմի քայքայման։ Ինչպես Կ. Պոլսոյ հունական եկեղեցիներու հրապարակներուն վրա, նմանապես Սիսի և Տարսոնի և այլ քաղաքներուն մեջ եվրոպացի Թագուհի և իշխանուհիներու հետեվեն «օտար է» ազգակները կլսվեին, ինչպես որ Ֆրանսիայի հեղափոխութեան ժամանակ Մարի Անդուանեթ կայսրուհու համար ժողովուրդը կը գոչեր «Ավտրուհի է»։ Երբ Մանուել Ա. կայսր 1180-ին մեռավ, Բյուզանդիայի ամբողջ բնակչութիւնը դրգռված էր Անտիոքցի Մարի խնամակալուհին և իր սիրահարը Ալեքսիս Կոմնենոսի յատնասիրութեան դեմ ու միևնույն ժողովուրդը, երբ լսեց որ Անդրոնիկոս քաղաքին կմոտենա, յատիններու դեմ իր ցասումը հայտնելու առիթ գտնելով 1182-ին սկսավ յատինները կոտորել։ Ամբոխը ոչ միայն յատին մատնավորներու խանութները կողոպտեց, այլև յատին եկեղեցիներն ու բարեսիրական հաստատութիւնները նույնիսկ սուրե անցնելով հիվանդանոցի մը անկողիններուն, վրա պառկող բոլոր հիվանդները։ Կ. Պոլսոյ պապական նվիրակը անտանելի նախատինքներու ենթակա ըլլալե հետո դիմատվեցավ ու մեծ թիվով յատիններ իրը գերի վաճառվեցան Թրքական շուկաներու մեջ։ Ակիզբը դնելով Արևմտյան և Արևելյան եկեղեցիներու պառակտումին, մինչդեռ հույներու և Կիլիկիո մեջ հայերու կրոնական տոհմիկ զգացումները առանց վիրավորելու կարելի էր քրիստոնեական ապրիլ իրարու հետ և թույլ կանգնել երկու ժողովուրդներու համար ալ անխուսափելի նկատված իսլամական վտանգին առջև։

Թագավոր, Թագուհի, իշխան ու պառոնուհիներու խառն ամուսնութիւնները բնական է, որ իրը հիվանդագին դրութիւն, իրենց կարգին ծնունդ տային ավելի ծանր փատասխրութեանց և վտանգավոր արկածախնդրութեան հունաց Մանվել Ա. կայսեր նման, որ վերազեր պապին օդնութեամբ վերահաստատել հռոմեական միացյալ կայսրութիւնը, Լեվոն Ա. Եվրոպական վեհապետներեն թագ ընդունելու տենչով հանձն առավ մնալ «ի հնազանդութիւն եկեղեցւոյն Հռոմայ» և այդպես ալ 1199 յունվար 6-ին Տարսոնի հայոց եկեղեցիին մեջ պապին և կայսեր ներկայացուցիչ կարդինալ Գոնրադոս արքեպիսկոպոսեն, լատին թագադրութեամբ թագավոր պսակվեցավ։ Գարդ ձեռականութեան և բարեպաշտ ժողովուրդի հոգեկան անդարդութեան համար էր, որ հանգեսը օծումի երկրորդ մաս մը ալ ունեցավ, զոր հայկական ծիսով կատարեց Գրիգոր Զ. կաթողիկոս։ Լևոն թագավոր և իր հաջորդներ նման լատին ծիսով սպասաւորության տրվելու թիւն խնդրեցին պապական նվիրակներեն իրենց արքայազուններուն համար։

Ֆրանսացի պատմագիր և քննադատ ժաղ դը Մորկան, որ օտար մըն է, վերջապես համաձայն է մեզի հետ վկայելու, որ Լևոն Ա. թագավորի կրկին օծումը քաղաքական շատ ծանր հանցանք մըն էր, վասն զի հայերը— կրոնական հավատալիքներուն մեջ այնքան այլասերժ, որքան բյուզանդացիները,— կաթոլիկ ծեսով օծումը հայկական ծեսին հանդեպ նախատինք մը պիտի նկատեին ու իրենց այս դժգոհութիւնը հետագային պիտի մեկնվեր մասնութեամբ[1])։ Լևոնի օրով վաղուց դադար առած էին հունասիրտ զգացումները և տեղի տված ավելի ղորավորին, տակավ ընդարձակվելով հայոց մեջ լատինասեր ձգտումները։ Լևոնի թագավոր հռչակելու

Jagues de Morgan, „Histoir de peuple Armenien“, Paris, 1918, էջ 231։

ցանկություն կարծեք ավելի սրեց յուսահատ նամիտ ախորժակները, արքունի շրջանակներուն և ասոր կապված կղերական բարձր դասուն մեջ։ Արտաքին և ներքին սրամտական քննադատություն միաձայն տեսությամբ մեղադրելի դատած է Լեոնի փառասիրությունը, որ դինքը եղավ պապին հովանավորություններ փնտռելու չափ առաջ երթալու, մինչև նախընտրելի էր իր իսկ նախաձեռնությամբ ընդարձակած կելիկիայեն սահմաններուն մեջ մնալ իշխան կամ իշխանապետ մը ու մեկտ ազատ ու անկախ, քան թե թագավոր, բայց ենթակա օտարի, վասն զի պետք էր փորձառությամբ դիտեցած բլլար արդեն, որ նման վտանգավոր դիմում մը, առանց դավանափոխության պայմանները հարդելու իր լրացումը չէր դտներ։

(Շարունակելի)

ԱՐՇԱՎԱԶԴ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍ



...ՄՈՎՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՈՐՊԵՍ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԵՎ ՇԻՆԱՐԱՐ

17-րդ դարի առաջին 25 տարիները հայ հասարակական կյանքի համար թշվառության տարիներ հանդիսացան։ Օսմանցիների և պարսիկների մեջ մղվող պատերազմները Հայաստանին ու Վրաստանին սիրաշրջանելու նպատակով, որոնք մի քանի անգամ փոփոխական բաղդով հաջորդեցին միմյանց, մեր երկիրը տնտեսապես քայքայեցին ու կազմալուծեցին։

Դավրիժեցին չափազանց մռայլ գույներով է նկարագրում մեր այս ժամանակաշրջանի կյանքը։ Նրա նկարագրությունը չափազանցություն չէ, այլ պատերազմի գաղթի և սովի հետևանքով առաջացած մի գոյավիճակ, որը իր հետ պիտի բերեր նաև հոգևոր ու մտավոր կյանքի սմուլություն։

Այս կապակցությամբ Դավրիժեցին գրում է. «Քանզի մինչև ցայս վայր ապիաուքնամբ խոպանացեալ և կորդացեալ էր ազգս Հայոց, և ոչ միայն ոչ ընթեռնուին այլ և ոչ գիրս գիտէին, և ոչ զգրաքիւնս գրոց. վասնզի անպիտանացեալ էր գիրքն յաչս մարդկան, և իբրև Զկոճեղս փայտից անկեալ յանկեան ուրեք լցեալ հողով և մոխրով, այլև ոչ դոյր ի ժամանակին յարմիկ անապատ և կամ վիճող կարգաց կրօնաւորական վարուց, վասն բազում հինից թշնամեաց եկեալց ի վերայ և վրդովմանց և աւերանաց աշխարհիս Հայոց, ամենեքին բնաջինջ եղեալ էր և բարձեալ նշոյլ և նշմարան առաքինի գործոց և բարի կարգաց յաչխարհէս Հայոց»[1]։

Այս ընդհանուր ամայության և համատարած տգիտության մեջ հրապարակ են գալիս Սաղմոսավանքի Սարգիս եպիսկոպոսը և Տրապիզոնցի Կիրակոս քահանան, որոնք կազմակերպում են հայ դպրոցը Սյունիքում։ Այս դպրոցը հայտնի է Սյունյաց անապատ անունով։

Դավրիժեցին այսպես է բնութագրում Տեր Կիրակոսին. «Անձամբ ընթեռնոյր զգիրս առաուածային և ի միտս առնոյր զպատգամս նոցա և ջանիւք և երկոք կերպէր զանձն ըստ հրամանի գրոց, և ենգաստաւարիլ» (Դավրիժեցի, էջ 251)։

Այս ազատիզոնցի քահանան «լուաւ յամանց վասն Սարգիս եպիսկոպոսի, թէ և նա զզնացեալ է յաչխարհէ և կամի հրաժարիլ և հետեալ առաքինի վարուց» (Դավրիժեցի էջ 251)։ Եվ ահա վանականությունը վերականգնելու և հայ եկեղեցին փրկելու մտքերով վառված Տեր Կիրակոսը Տրապիզոնից գալիս է Սաղմոսավանք Սարգիս եպիսկոպոսին տեսնելու և նրա հետ զրուցելու։ Այդ ժամանակ եպիսկոպոսը մեկնել էր Երուսաղեմ։ Տեր Կիրակոսը վերադառնում է Տրապիզոն, վաճառում իր ունեցած չունեցածը և մեկնում Երուսաղեմ Սարգիս եպիսկոպոսին գտնելու։ «Վաճառեաց զամենայն ինչս իւր, զմասն ինչ ետ աղքատաց և զառնն ե դանդատանն իւր աւանդեաց եկեղեցւոյն Տրապիզոնայ, և զմասն ինչ էառ ընդ իւր Թոչակ ճանապարհին և եկեալ գնաց յԵրուսաղէմ»։

Տեր Կիրակոսն ու Սարգիս եպիսկոպոսը Երուսաղեմում համաձայնության են գալիս և Մովսես վարդապետի խորհրդով որոշում են Սյունյաց երկրում հիմնել իրենց դպրոցն ու անապատը։ Վերադառնալով Հայաստան, Թանահատի վանքի մոտերը նրանք հիմնում են Սյունյաց Մեծ անապատը. «Ի վերայ բարի համբաւոյ նոցա եկին բազումք և յաբեքան ի նոսա և եղեն միաբանք և բնա-

[1] Դավրիժեցի, էջ 251։

կիչք սեղուն (Դավրիժեցի, էջ 253), ոչ միայն աշխարհական և անեղանք, այլև եկեղեցականք և անուանի արք, վարդապետք, եպիսկոպոսք և քահանայք։

Սյունյաց Մեծ Անապատը հիմնվեց 1610 թվականին. այս անապատի ձիներաբերության մեջ իր դերն ունեցավ նաև Սյունեցի Մովսես վարդապետը։

Մովսեսը 15 տարեկան հասակում ձեռնադրվեց վարդապետ։ Նա Սյունյաց երկրի Աճանան գավառի Խոտանան գյուղից էր։ Իր կրթությունն ստացել էր հարազատ Սրապիոն վարդապետի դպրոցում։ Սրապիոնը նկատելով Մովսեսի առաջադիմությունը և ձիրքերը կապեց իր աշակերտ կեսարացի Գրիգոր վարդապետին հատուկ խնամք տանել նրա դաստիարակության վրա։ Սրապիոնի մահից հետո 1606 թ. նա միաժամանակ մնաց կեսարացու մոտ, հետո մեկնեց Երուսաղեմ և ահա այստեղ հանդիպեց Տեր Կիրակոսին և Սարգիս եպիսկոպոսին։ Մովսեսը եղավ նրանց դպրոցի ոգևորիչը, նա խորհուրդ տվեց անապատը բաց անել Սյունյաց երկրում, խոստանալով վերադառնալ և մասնակցել անապատի աշխատանքներին։ Նա իր խոստումը կատարեց՝ 1615 թվին վերադարձավ և դարձավ Անապատի ամենաակտիվ գործիչներից մեկը։

Այս Մեծ Անապատը, որ հանդիսացավ վանական կյանքի վերակենդանացման սկիզբը, ղեկավարում էր վեց հոգի։ Տեր Կիրակոսը ղեկավարում էր հոգևոր կյանքը, Սարգիս եպիսկոպոսն զբաղված էր անապատի ընդհանուր ղեկավարությամբ և նրա տնտեսությունը ստեղծելով ու բարեկարգելով, Մովսես, Ներսես և Պողոս վարդապետները վարում էին անապատի կրթական, դպրոցական կյանքը։

«Եվ էր հոգաբարձու ի մարմնաւոր կողմանէ անապատիս Սարգիս եպիսկոպոսն և գրոց ուսուցիչ տէր Կիրակոսն և Պողոս վարդապետն, Մովսէս վարդապետն և Ներսէս վարդապետն և Թումայ եպիսկոպոսն, որք բազում ժամանակս կացին ի միասին սոքա ամենեքեանս» (Դավրիժեցի, էջ 257)։

Անապատական կյանքի վերակառուցման հիմքերը հետևյալն էին՝ պահեցողություն, անընդհատությունն, աղքատություն, հնազանդություն, անխափան աստվածապաշտություն և Սուրբ Գրքի ընթերցումներ։

Ինչպես տեսնում ենք, անապատը վերականգնում էր նախ խախտված եկեղեցական կարգը, ստեղծում էր հոգևորականից պահանջվող վարքն ու բարքը և դրա համապատասխան կենցաղավարությունը և քանի որ այդ բոլորը առնչվում էին ամենից առաջ Ս. Գրքի և եկեղեցական դրականության հետ, հետևապես վերականգնվում էին նաև դպրոցն ու գրականությունը։

Վերջին հանգամանքը՝ դպրոցի վերականգնումն ու գրականության առաջ քաշվելը կարևոր է և չպիտի վրիպի մեր ուշադրությունից։ Անապատական շարժումը չափազանց մեծ և արդյունավետ եղավ հայ եկեղեցական կյանքում։

Սյունյաց Մեծ Անապատը պատրաստեց յուրջ կադրեր, որոնք հետագայում ծավալվելով Հայաստանի զանազան կողմերում նրա օրինակով հիմնեցին մի շարք անապատներ։

Անապատների թիվն աճեց շատանալ։ Այսպես՝ Ներսես վարդապետ Մոկացին հիմնեց Լիմ անապատը, Դարապետ եպիսկոպոսը՝ Սևանի անապատը, Արիստակես վարդապետը՝ Տաճաքարաթի անապատը, Դավիթ եպիսկոպոսը՝ Զարևքաղաքի անապատը և այլն։

«Եվ և այլ ևս մանունք անապատք շինեալք այսր և անդր, բայց մեք գնչանուրսն յիշեցուք, որ յայս մեծ անապատս ուսեալ և վարժեալ գնացին յայլ տեղիս և հաստատեցին, որոց ամենեցուն եղեն սկիզբն և պատճառ վերոյասացեալ երկոքին արքն, Սարգիս եպիսկոպոսն և Տէր Կիրակոսն» (Դավրիժեցի, էջ 255)։

Անապատների դերը հակիրճ կերպով այսպես է բնորոշում Դավրիժեցին. «Սկսան յընթերցմանէ և յուսուցանելոյ գրոց վերըստին նորոգել և յարդարել զամենայն

կարդս բարին, անապատաց և վանարէից և ժամատեղաց» (Դավրիժեցի, էջ 255—256)։

Անապատի սյունը, նրա փառքի և կյանքի վերանորոգիչը հանդիսացավ Սյունեցի Մովսես վարդապետը։ Մովսեսը չկարողացավ անջատվել ժողովրդից և փակվել վանական սահմանափակ չրջանակում։ Նա սիրեց իր ժողովրդին և սկսեց նրա կյանքի կազմակերպումը։ Իր այս նպատակն իրագործելու համար նա սկսեց շրջել հայ գավառներն ու գյուղերը, եկեղեցիները բարեկարգել, դպրոցներ բանալ և քարոզել։ Կարճ ժամանակում նա դարձավ բոլորի սիրելին ,Նրա համբավը տարածվեց ամբողջ Հայաստանում և հեռավոր գաղթավայրերում ապաստանած հայկական բեկորներն սկսեցին որոնել Սյունեցի խիզախ և հայրենասեր վարդապետին։ Նա գրեթե շրջեց Հայաստանի մեծ մասը։ Նա շրջում էր ոտքով, նրան հետևում էին նրա 15—20 առաջավոր աշակերտները, որոնք իրենց մեջքերին տանում էին իրենց պարենը, անհրաժեշտ գրականությունը և այլն։ Այս հուզիչ տեսարանը բորբոքում էր հավատացյալ ժողովրդի զգացումները և խանդավառություն առաջ բերում։ Մովսեսից առաջ նույն այս քարոզչական գործունեության էր նվիրվել նաև Գողոս վարդապետը։ Ուանդուն և նվիրված վարդապետների գործունեությունը նախանձ առաջ բերեց վանականների մթնոլորտում։ Վանականները և նույնիսկ ժամանակի կաթողիկոս Մելիքսեթն սկսեցին հալածել նրանց, արգելել նրանց «վնասակար» քարոզչությունը։ Գողոս վարդապետն ստիպված առանձնացավ անապատում և այլևս դուրս չեկավ այնտեղից։ Մովսես վարդապետը այլ ուղի ընտրեց։ Տեսնելով որ անհնար է կաթողիկոսի հալածանքներից ազատվել, որոշեց հաստատվել Անանիա առաքյալի անունով վանքում և շարունակել իր քարոզությունները։ Այստեղ նրա հռչակը հասավ իր դարձաթնակեռին։ 1619 թվին Մելիքսեթ կաթողիկոսը Մովսես վարդապետին ձեռնադրեց եպիսկոպոս։ Կաթողիկոսը խոշոր գումարներ հավաքելու նպատակով որոշեց մյուռոնօրհնություն կատարել և հայտարարեց, որ մյուռոնը պիտի օրհնի Մովսես վարդապետը։ Այսպիսով նա փորձում էր Մովսեսի հեղինակությունն ու ժողովրդականությունը օգտագործել։ Մովսեսը մերժեց կաթողիկոսին, առարկելով, որ վարդապետը եկեղեցական օրենքների համաձայն չի կարող մյուռոն օրհնել, որ այդ վերապահված է եպիսկոպոսներին։ Մելիքսեթը հարկադրվեց նրան եպիսկոպոս ձեռնադրել և մյուռոնօրհնություն կատարել տալ։

Մովսեսի համբավը Սպահան հասավ։ Սպահանի հայերը միաձայնություն հարուցեցին Մովսեսին որպես քարոզիչ Սպահան տեղափոխվելու։ Մովսեսը գնաց և մխիթարեց օտարության մեջ գտնվող ժողովրդին, նա շրջեց Պարսկաստանի բոլոր հայաբնակ գավառներն ու գյուղերը և կրկին վերադարձավ Երևան։

Հայտնի է, որ Մովսեսը Երուսաղեմում սովորել էր մոմագործության արհեստը։ Նա եկեղեցու համար դեղեցիկ և ճաշակով փայլուն մոմեր էր պատրաստում։ 1623-ին պատահմամբ նա ծանոթանալով մի պարսիկ նշանավոր դինվորականի հետ, իբրև հարգանքի նշան, նրան մի քանի հատ մոմ տվեց։ Այն ժամանակի համար մոմը նորություն էր։ Պարսիկը հիացավ և հայտնեց, որ այդ մոմերը տանելու է Շահ Աբասին նվեր, քանի որ դրանից լավ բան չի կարող ճարել, դրանով կարող է հիացմունք պատճառել արքայից արքային։ Այն ժամանակ Մովսեսը ավելացրեց մոմերի քանակը, խնդրելով իր կողմից էլ նվեր տանել։ Պարսիկը մոմերն ուղարկեց Շահ Աբասին։ Շահն ամեն կերպ շահագրգռված էր Պարսկաստանի առևտուրն ու արդյունաբերությունը զարգացնելու և մոմերն ստանալուն պես հրամայեց Մովսես եպիսկոպոսին իր մոտ ուղարկել։ Մովսեսը ներկայացավ Շահին 1624 թվին և Շահը կարգադրեց արհեստանոց բանալ և այդ արհեստը պարսիկներին սովորեցնել։ Մովսեսն, ի-

հարկն, շահի հրամանը կատարեց։ Շահը հարցրեց ջուղայեցիներին, թե ինչով պետք է պարգևատրել հուշակավոր եպիսկոպոսին։ Մովսեսը, որ սարսված էր միայն Սայր Աթոռը բարեկարգելու և Էջմիածինը վերանորոգելու ունչերով, ջուղայեցիների միջոցով հայտնեց, որ ինքը ցանկանում է Մայր Աթոռի լուսաբարությունն ստանալ։ Շահը նրան նշանակեց Ս. Էջմիածնի լուսարար։ Շահի միջնորդությամբ կաթողիկոսը Մովսեսին դարձնում է Ս. Էջմիածնի վանքի լուսարար։ Մովսեսը ստանձնելով Ս. Էջմիածնի լուսաբարությունը իսկույն ձեռնարկեց վանքի վերաշինությանը և կարգավորմանը։ Պատերազմներից վանքը խիստ տուժել էր և քայքայվել, հարկավոր էր այն կարգի բերել։ Պաշտոնի անցնելու առաջին իսկ օրերից Մովսեսը ձեռնամուխ եղավ վանքի նորոգմանը։ Մովսես վարչապետը Էջմիածնի նորոգությունը Դավրիժեցու ասելով սկսում է «Թուականս մերում ՌՀԶ ի վարդավառի պահոց երկու չարաթ աւուրն սկիզբն արարին շինութեան և նորոգութեան»[1]), այլ խոսքով նորոգումն սկսվում է 1627 թվականի ամառը։

Որպեսզի փոքր ի չատե ծանոթանանք Մովսեսի կատարած շինարարության և Ս. Էջմիածնի այն ժամանակվա վիճակի հետ, հարկավոր է մեջ բերել Դավրիժեցու նկարագրությունը. «Զի ամենևիմբ ունայնացեալ էր ի ստացուածոց և կողոպտեալ ի ղարզուց. ոչ դիրք, զի ոչ էր անդ ժամ ասել և կամ ընթերցումն և ոչ զգեստ և շուրջառ, զի ոչ էր ժամակարգութիւն և պատարագ, մինչ զի Քրիստոսի իմման տեղն և սուրբ սեղանն ես ոչ ունէին ծածկոց, ոչ կանթեղ, զի ոչ գոյր լոյս, այլ հանապազ ի խաւարի, բայց այլ աղգի մահմեդական սմն վառէր գճրագ ձիթոյ և դնէր ի վերայ բեմին, և այն ևս երբեմն երբեմն, վասն անցաւոր ճանապարհորդաց, զի տեսանելով զայն զողորմութիւն արասցեն նմա ոչ խնկարկութիւն, զի ոչ գոյր բուրվառ և խունկ և սալարկ յատակ եկեղեցւոյն քանդքանդեալ, եղեալ որջ գեռնոց և սոգոց և մեծամեծ լուսաժուռքն, զոր ունի, ամենն ի բաց կայր առանց վանդակի, ուստի մտեալ ի ներքոյ Քրիստոնք ընուին զեկեղեցին ծառովք և ծղովք և այլ դեսխովք, զոր յամենայն աւուր հարկիս սրբէաք և ընդ այդն ընդ առաւօտն ի լուսանալն ձայնք Քրիստոնց խափանէր զձայն ժամասելոյն։

«Իսկ յարաքուստ կուսէ գլուխ կաթուղիկէին և տանիքն ամենայն և երեսք որմոցն քանդքանդեալք և քարինքն Քրիստեալք և որմոց յատակաց վէմքն փշրեալ և ծակոտեալ։ Ես ի վաղեմի ժամանակաց, որ չուրջ զեկեղեցեաւն չինութիւն եղեալ էր, և դարձեալ աւերեալ և ի վերայ միմեանց փլուզեալ էր, և այնքան բարձրացեալ էր հողն և մոխիրն, որ յամենայն կողմանց չուրջ զեկեղեցեաւն եօթն կանգուն բարձրացեալ էր աղբիւսն և հողն եկեալ և ծածկեալ էր զհիմունս և զառաջեանս եկեղեցւոյն, որք կան յարտաքուստ կողմանէ։

«Եւ ասացեալ բանքս, որք ի մէջն ցուցանեն զահգին անբնակ գոլ ի մարդկանէ. և ասեմ զիսկն, ոչ էր ամենևին անբնակ, այլ դու համարեա իբրև դանբնակս, վասն զի կաթողիկոսունքն անդ յէջմիածին ոչ բնակէին, այլ յերևան քաղաք ի կաթուղիկէ յեկեղեցւոջն, և կամ թէ ի չրջաղայութիւնս աշխարհաց, բայց սնաղլուխք ոմանք սինլքորք և գոռհիկք որպես զգեզական հողագործս, որք վարնորդ մշակք բնակէին յէջմիածին, և դաւուրս տարւոյն զրաղումն է գեղոցյն անցուցանէին, քան թէ յէջմիածին»[1])։

Կուտակված աղբն ու հողը, փլվածքները և այլն վանքի մեջից և շրջապատից մաքրելու համար բաց են թողնում դեռի ջուրը, որը սրբում և տանում է ամենինչ։ Ամիսներ ի վեր հարյուրավոր բանվորներ են աշխատում և վերջապես հաջողում են մաքրել ու կանոնավորել։ Այնուհետև վանքի չուրջը պարիսպ են քաշում։

1) Դավրիժեցի, 309.

1) Դավրիժեցի, էջ 303—305։

վանքը պարսպապատելուց հետո չինում են հյուրանոց, մթբաններ համար խցեր և սեղանատուն, փռնատուն, տնտեսատուն, համբարանոց ցորենով և այլ նիւթոց»[1]:

Դավրիժեցու վերջին խոսքերից երևում է, որ կառուցվել են հիմնական շենքը և ժամանակի ճաշակով շենքեր: Մովսեսի կառուցած այդ շենքերի մի մասը դեռ մինչև այսօր կանգուն է ս. Էջմիածնում:

Մովսեսի աշխատանքները, սակայն, դրանով չվերջացան և նա ձեռնամուխ եղավ նաև վանքի արտաքին և ներքին նորոգութեանն ու բարեկարգութեանը:

«Յետ այսորիկ զնկեղեցւոյ դմբեթի տանիքն նորոգեցին, քանզի սալերն քանդեալ և ի տեղւոյն ի բաց ոստեալ էին»[2]:

Եվ այնուհետև «հմտաբար նորոգման սրբոյ Աթոռոյս հուշակեալ ծառայեցա, ընդ ամենայն աշխարհ, ի Հոռոմաստան, ի Պարսկաստան, ի Քրդստան, ի Վրաստան, և ամենեքեանք զուարճացեալք ցնծային»[3]:

Վերանորոգչական այս աշխատանքներն ավարտելուց հետո Մովսեսը ձեռնարկում է հոգևոր կադրեր պատրաստելու, եկեղեցական ծեսերն ու ժամակարգությունը վերականգնելու գործին: Այդ նպատակով նա Հոհանավանքում դպրոց է բաց անում «կարգեաց դպրատուն ի մեծագոյն սուրբ ուխտն Յոհանավանք, ուր ժողովեաց մանկունս յոլովս և զամենեցուն զծախսն և զպէտսն ինքն հոգայր»: Այս դպրոցը տալիս է իր լավ արդյունքները, «որք եղեն ամենեքեանք արք պիտանիք և օգտակարք աշխարհի, վարդապետք, եպիսկոպոսք և աբեղայք և երիցունք և ամենայն վանորայք, որք ամայացեալք ի խաւարի կային, եղեն լցեալք միաբանօք, աբեղայիւք և կրօնաւորօք[1]), իսկ գյուղերը— «վարժ երիցամբք»:

Իր նոանչուն գործունեության հետևանքով Մովսեսը արագ կերպով ժողովրդականացավ և ճանաչվեց կաթողիկոսության միակ արժանավոր թեկնածուն: Այս կապակցությամբ Դավրիժեցին գրում է. «Գրովք և աղաչանօք թախանձէին յամենայն տեղեաց վարդապետք և եպիսկոպոսք և երեւելի արք, զի յանձն առցէ զաստիճան կաթողիկոսութեանն»: Մովսեսը զիջում է այդ թախանձանքին և դառնում կաթողիկոս: Սակայն նրան հարկավոր էին անհրաժեշտ նյութական միջոցներ, և այն էլ առատ միջոցներ, որպեսզի նա իրականացներ իր շինարարական ծրագիրը, բայց Մայր Աթոռը չուներ: Ժողովուրդը նոր էր սկսել շունչ քաշել պատերազմի աղետից, նոր էին վերականգնվում ավերված գյուղերն ու քաղաքները: Այս հանգամանքը դժվարացնում էր Մովսեսի գործը: Չնայած դրան, անդուլանելի նա որոշում է դիմել ժողովրդի օգնության: Այս նպատակով նա նվիրակներ ուղարկեց ամեն կողմ Մայր Աթոռը պահպանելու և ծաղկեցնելու համար միջոցներ հավաքելու: «Եւ իբրև եղև կաթողիկոս, ունէր միաբանս և աշակերտս բազումս և վասն նորոգութեան սրբոյ էջմիածնի, որ նոր էր սկսեալ, առաքեաց դաշակերտսն իւր ի նուիրակութիւն, զի

1) Դավրիժեցի էջ 206.
2) Նույն, էջ 206.
3) Նույն, էջ 207.

1) Նույն, էջ 207.

բերեն ինչո յաժանդակութիւն նորոգման սուրբ Աթոռոյն Էջմիածնի։ Մովսես կաթողիկոսը իր աշակերտներից մեկին Փիլիպպոս վարդապետին[1]) նվիրակ է ուղարկում օսմանյան բաժնի Հայաստանը՝ Երզնկում, Բաղեշ, Վան և այլն և անհրաժեշտ նյութական աջակցություն ստանում որանցից։

Մովսես կաթողիկոսը շարունակում է իր եռանդուն աշխատանքը ուշադրության կենտրոնում պահելով դաստիարակության և եկեղեցական ներքին կարգ ու կանոնը վերակենդանացնելու խնդիրը, բայց դժբախտաբար նա երկար չապրեց։ Նա վախճանվեց 1632 թ. մարտի 13-ին Երևան քաղաքում Ամանիա առաքյալի անվան վանքում։ Նրա թաղումը եղավ չափազանց հանդիսավոր։ Նա թաղվեց Գոզեռ բլուրի վրա գտնվող դերեզմանատանը։

Մեծ էր Մովսեսի հեղինակությունը, այն բխում էր նրա բարոյական կենցաղից և նվիրվածությունից եկեղեցուն և հայրենիքին։ Թեպետ նա ընդամենը 12 տարի վարեց կաթողիկոսությունը, բայց կարողացավ մեծ գործ կատարել։ Մայր Աթոռը իր չրջանակներով բարեկարգեց, վերանորոգեց և դարձրեց կենդանի օջախ, Աթոռն ազատեց պարտքերից, չորաչահությունների և կողոպուտներից, կահավորեց վանքերն ու եկեղեցիները, սկիզբ դրեց վանական դպրոցական կյանքին, որ խախտվել էր նախորդ տարիներում, հետ գնեց գրավ դրված եկեղեցական անտիներն ու ագանները։ Նա Մայր Աթոռի չուրջը համախմբեց աշխարհի բոլոր կողմերը ցրված հայերի ուշադրությունը, և նրանցից ստացավ չերմ աջակցություն։

Մովսես կաթողիկոսի գործունեության գլխավոր էջերից մեկն այն է, որ նա չատ լուրջ ուշադրություն դարձրեց կադրերի պատրաստման վրա։ Նա ամենից առաջ որոնեց և գտավ իսկական մարդը, վառ հայրենասերը, ժողովրդին նվիրվածը։ Նրա բոլոր աշակերտներն արդարացրին իրենց մեծ ուսուցչի հույսերը։

Պատահական երևույթ չէ այն հանգամանքը, որ երբ Մովսես կաթողիկոսը հիվանդ էր և նկատում էր անողոք մահվան մոտենալը, նրան չրջապատեցին եպիսկոպոսք և վարդապետք և երևելի արք, նաև Թահմազդուլի խանն և ողբալով ասացին, որովհետև այդպէս հաճեցաւ վասն քո Տէրն և տուողն կենաց, դի մեկնիս և գնաս ի մէնջ, այլ արդ խնդրեմք ի հայրախնամ դթոյ քո, դի մի կարի թողուցուս զմեզ որբ, այլ յայտնեա մեզ, թէ զո՞վ ոք ասա մեզ լինիլ հայր և հովիւ զկնի քո և նա ասաց, դուք դիտէք զով ոք և կամիք, ընտրեցէք։ Իսկ բամբ ժողովրդն ասացին, մեք բոլոր ազիարհ զքեզ ընտրեցաք, և արդ զու զով ոք և ընտրեսցես ընդունելի է մեզ։ և նա ասաց։ Ես զՓիլիպպոս վարդապետն կամիմ լինել փոխանորդ իմ և յաջորդ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի և նոքա ամենեքեան իբրև զայն լուան, յաժար կամօք հաճեցան և ընկալան զՓիլիպպոսն լինել կաթուղիկոս[1])։

Մովսես կաթողիկոսի ջանքերով հայ եկեղեցու նոր դարաշրջանն սկսվեց, գարթոնքի, վերաշինության և ինքնագիտակցության դարաշրջան։ Այն վերածնունդը Մայր Աթոռում, որ սկսեց Մովսեսը և ժամանակ չունեցավ ավարտելու, նույնպիսի փառավորությամբ, ոգևորությամբ շարունակեց նրա հաջորդ և նրա հավատարիմ աշակերտ Փիլիպպոս կաթողիկոս Աղբակեցին։

ՌՈՒԲԵՆ Վ.ՐԴՈՒՊԵՎ

---

2) Փիլիպպոս վարդապետը Մովսես կաթողիկոսի աշակերտն էր, որին Մովսեսը ուղարկել էր Օսմանյան բաժնի Հայաստանը որպես Էջմիածնի նվիրակ. Մովսեսի մահից հետո նրա թողած կտակի համաձայն ազգային ժողովը Փիլիպպոսին ընտրեց կաթողիկոս. Ռ. Վ.

1) Դավրիժեցի. էջ 315—316.

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՃՄԱՑԻՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՍՏՎԱԾՆԵՐՈՒ ՁՈՀԸ

Զոհ մատուցանելու սովորությունը ծանոթ է մեզ քրիստոնեական շրջանի մատաղի սովորութենեն:

Մատաղի սովորության ծագումը հրեական է: Հին կտակարանի մեջ կկարդանք կենդանիներ, պտուղներ ու բերքեր նվիրելու հնավանդ սովորությունը:

Ղեվտացվոց գրքին մեջ կկարդանք հետևյալ բառերը. «Արջառներեն, ոչխարներեն կամ այծերեն անարատ արու պիտի մատուցանե, որպեսզի ձեզի համար ընդունելի ըլլա: Երբ զվարակ կամ այծ կամ ոչխար ծընի, յոթ օր իր մոր քով պիտի մնա. ութերորդ օրը ու անկե ետքը սրբորդ ընդունելի պետք է ըլլա պատարագի ընծայի համար:

«Եվ կովը կամ ոչխարը իր ձագով մեկ տեղ մեկ օրվա մեջ չմորթեք»: (Տես գլուխ ԻԲ—19, 27—28):

Ինչպես նաև կկարդանք. «Բուն երկրիդ առաջին երախայրիները քու Տեր Աստուծուդ տունը տանիս» (Գիրք Ելից):

Հին հայերը թե հեթանոսական ու թե քրիստոնեական դարերուն հետևած են վերի սովորության:

Քրիստոնյա Հայաստանի շատ մը սովորությունները շարունակությունը ըլլալով հեթանոս Հայաստանի վաղեմի սովորությանց պետք ենք լրջորեն հետևել անոնց ու քննել:

Կենդանիներու զոհի մասին հինգերորդ դարուն ապրող Հովհան Մանդակունին իր «Ճառք»-ին մեջ հայ զոհերու իրը նյութ կհիշե «խաչն ու ոչխար, ցուլ և եզ»:

Իսկ Դ-րդ դարու նշանավոր գրողներեն Զենոբ Գլակ իր «Պատմութիւն Տարօնոյ» երկին մեջ կավանդե, որ Տրդատ Մատաղ ըրավ սպիտակ զվարակաց, հովազներու, գառներու բավական բազմություն մը: Մատաղի անասունները պետք էին սպիտակ ըլլալ, որ հնագույն սովորությունն էր Հայաստանի հեթանոսական մատաղին:

Դարենքերգ կը պնդե, որ հին հելլենները իրենց զոհերուն համար ծիսական խորություններ ունէին: Սկիզբները սպիտակ անասունները պետք էին արու ըլլալ, ինչպես հրեաների մեջ. հույները ևս նույն խորությունը կդնեին, բայց միջին դարուն հայկական զոհերը կրնային որձ կամ էգ ըլլալ, կըսեն Տարոնացին ու Շնորհալին — «արս կամ էգ անփոյթ իջնալ» կըսե Շնորհալին (տես «Թուղթ ընդհանրական»):

Ըստ Մանդակունիին բոլոր զոհերը պետք էին ըլլալ «գեր ու ուղիղ», որպեսզի «զանազուտն և զվտիտն» աղքատներուն նվիրելու չստիպվինք: Մանդակունիին կը հետևի Գրիգոր Տաթևացին, որ իր «Գիրք հարցմանց»-ին մեջ կըսե, թե զոհերն պետք են ըլլալ ընտիր ու գեր:

Զոհի անասունը պետք էր արդար վաստակի արդյունք ըլլալ ու ոչ հափշտակության ու գողության արդյունք, այլապես «պիղծ» պիտի համարվեին, կըսե Մանդակունին իր «Ճառք»-ի մեջ էջ 58: Ու «Մացոթյա պիտի ձգվին որպեսզի շներու կեր ըլլան» կրսե 12-րդ դարու նշանավոր հայ վարդապետ մը՝ Դավիթ իր «Կանոնք»-ին մեջ:

Ինչպես որ տեսանք, մատաղի կամ նվերի նյութը միայն անասունները չէին, այլ նաև ուտելի ու բմպելի նյութերը ևս կրնային ընծայաբերվել:

Մանդակունին, Սահակ Պարթևը ու Տարոնացին կիսատուն այս պարապան։ Մանդակունին կՊվի «Կարգ հնձանի» նվիրները։ Սահակ կիսոսի «Պատուղ յամենայն արմտեաց, առաջին արմտեաց, այսինքն յընտրոյն, զի զկոծցին կալք ցորենոյ և լիշոյ» բառերով։ Իսկ Տարոնացին իր «Թուղթ առ Թեոփիստէ»-ին մէջ կրսե, թէ այս սովորութիւնները իր օրոք կային ու ընդհանրացած էին հայոց մէջ «զի ամենայն պատուոյն տան զպատարագս Աստուծոյ»։

Հին հուները, Եգիպտացիները և հռոմայեցիները իրենց եկեղեցին պտուղը նվիրած են աստուածներուն,

Երբեմն զինքն ալ իբր բերք կնվիրեին։ Հայերն ալ ունեցան այս սովորութիւնը, որ կիսատուի 1345-թվականին Սիս մայրաքաղաքին մէջ գտնված հին Մաշտոցի մը «Օրհնութիւն»-ն, գրված հայոց կոստանդին Բ. Թագավորին օրով 1344—1363, որ որդին էր Նղբյան ցեղեն Պաղտին Մարաջախտին։

11-րդ դարում գրված ուրիշ Մաշտոց մ'ալ ունի հետևյալ օրհնութիւնը, ուր հիշատակութիւն կրնէ զինքն։ «Աւրհնեալ ես Տէր Աստուած, արարիչ ամենայն արարածոց, առաքեա զչնորհս հոգւոյդ սրբոյ ի վերայ սեղանոյս այսորիկ, որ առաջի եղեալս կայ, աւրհնեա զհացս զայս և զգինին, զի որք կերիցեն և արբցեն ի սմանէ, եղիցի նոցա ի սրբութիւն և ի քաւութիւն մեղաց, ի կենդանութիւն և ի փրկութիւն անձանց, բարեխաւսութեամբ ամենայն սրբոց վկայից քոց»։

Գինիին նվիրումը կատարյալ հեթանոսական էր ու այդ պատճառով մեր առաջին վարդապետները հետևեցան այս սովորության։ Հելլեններն ալ գործածեցին զինին։ Հոմերոսի «Իլիականին» մէջ կհանդիպինք Սքիլլես մեծ գյուղացուն, որ գնտեր զինի կթափեր, մինչ կայլեր Պատրոկլեսին մարմինը անդ, էջ 416։

Զոհ մատուցանելու մասնավոր կանոններ գոյութիւն ունեին։ Տաթևացին կամանդ հետևյալները.

Պետք էր զոհը մորթողը ըլլար «արուն», աչխարհական, հավատացյալ անձ մը։ Կինը, նեղքինին, անհավատը, արյունահեղը ու քահանան չէին կրնար անասուն մորթել։ Որովհետև, կըսե Տաթևացին, կինը ու նեղքինին անկատար մարդիկ են, անհավատն անարժան է, ու քահանային համար անոյատիվ էր արյուն թափել։ Զոհված անասունը պետք էր ըլլար «կենդանի, ոչ մեռած», պետք էր ունեցած ըլլար արյուն, շունչ ու կերմութիւն, այնպես որ եթե կատարելապես պաղած ըլլար, ուտելի չէր կրնար համարվիլ։ Մորթելու գենքը պետք էր ըլլար սուր երկաթյա դորձիք մը ու ուրիշ ոչինչ, որովհետև մյուս գենքերը չէին կրնար սուր երկաթի չափ արյունը քամել։

Տաթևացին դեռ կշարունակե, եթե այս պայմանները չի գոծադրվին, «զենեալն սկիզբ է, խոտան ու ոչ ուտելի»։

Զոհը ու անոնց ճաշերը քանի մը առիթներով տեղի կունենային։ Նախնիք սովոր էին քրիստոնեական դիտորդության պաղատարով կամ Աստուծո խոստացած ուխտերուն պատճառով կամ ննջեցյալներուն հոգիներուն պատճառով անասուններ մորթել կամ ուրիշ կերակուր պատրաստել ու բարեմաթիվ հավատացյալներ հրավիրելով անոնց կերակուր մատուցանել։

Այս կարգի ճաշերը մատաղ կկոչվին։ Հրեաներն ալ ունեին նույն սովորությունը։ Մատաղը երբեմն կոչված է նաև «պատարագ»։ Այս բառը տանված է հին կտակարանն ու կնշնակե իրը նվեր առ Աստված։ Մատաղը երբեմն կկոչվեր նաև «զենում» իրը այլոց համար անասուն մորթելու սովորություն, ուսկից կկոչվի նաև «Պատարագ զենման»։ Այս բառին կհանդիպինք Մխիթար Գոշի առակներուն մէջ։

Զենումը կհիշվի նաև Հովհան Մանդակունիին կողմե ու Տարոնացին «առ Թեոփիստէ» գրած թուղթին մէջ, որ գրված էր 11-րդ դարուն։ Ներսես Շնորհալին ալ գործածած է գայն իր «Թուղթ ընդհանրական»-ին մէջ։

Երբեմն պատարագ կամ զենում բառերը որակված են նախ իբր «ողջակեզ» (Զենոբ Գլակ), որ միայն հրեական սովորության մը իմաստը ունին, որովհետև հայերը կիզելու սովորություն չունեին։

Պատարագ ու զենում բառերուն տեղ հինները գործածած են նախ «ապաստ» բառը, որ հունարեն «ապաստիս» բառեն ծագած էր ու կնշանակեր սէր ու ողորմություն ու շատ հարմար էր մատաղներու տրիվ գործածվելու։

Մխիթար Գոշ այս բառը կհիշե «յաւուրս ապաստից», իսկ Գրիգոր Տաթևացին զայն հիշած է «ապաստս մատաղաց» բառերով, «Ապաստ» ու «Պատարագ» բառերուն զանազանությունը կբացատրվի Ներսես Աշտարակեցին Դվինի Բ. ժողովին «Կանոններուն» մեջ, բայց զանազանությունը գրված էր նախապես մեջ ու անոր տարբերակներ հանգամանքներուն մեջ։ Ապաստը կներկայացնե բուն իսկ ողորմության հաշը, որ պետք էր միայն կարոտյալներուն տրվեր, իսկ պատարագն կարհմաներ իբր եկեղեցականաց բաժին։ Հովհան Մանդակունին ալ մասամբ համաձայն է այս զանազանության, երբ կխրատե, որ պատարագը խառն տրվի թե քահանային ու թե կարոտյալներուն, իսկ ապաստը տրվի լոկ կարոտյալներուն, կավելցներ Աշտարակցին։ «Քահանայք յաղագս մատանեաց. մի բաժնին ըստ հրամանի կանոնաց, այլ ազգատաց տացին ի նմին (օրհնելու) ժամու յանդիման ապաստս տեառնն»։

Այս փաստերը ցույց կուտան, որ հին հայերը մատաղը կհամարեին պատարագ, զենում, ու ապաստ, որ պետք էր բաշխվեր եկեղեցականներուն ու կարոտյալներուն համահավասար։

Հեթանոս Հայաստանին ալ սովորությունը նույն էր, Հայ քուրմերը զոհին կարևոր մասը առնելեն վերջ կրնային մաս մը ալ բաժին հանել կարոտյալներուն,

Հեթանոս Հայաստանեն զատ, հեթանոս Հունաստանի ու հեթանոս Հռոմի մեջ ևս կային զոհի տրիվ կրոնական ճաշեր, որոնք այլև այլ տեղիներու մեջ կբլլային ու ի մասնավորի մեծ հաղթանակներ վերջ։

Ագաթանգեղոս կպատմե, որ Մեծն Տրդատի հայրն Խոսրով, երբ պարսից Արտաշիր թագավորին դեմ տարած էր փառավոր հաղթանակ մը, Հայաստանի պաշտամունքի վայրերում մեծարեց ոսպիտակ ցուլեր, նախաղներ, ձիեր ու ջորիներ։

Նույն սովորությունը կտիրեր նախ խաղօք առատացույց զոհս կրակի» (Եղիշե)։ Թե պարսից Հազկերտ թագավորը իր հաջորդներուն համար կրակին զոհեց ոսպիտակ ցուլեր ու գիտավոր նախաղներ։ «Ցուլեր... ցուլք ոսպիտակօք և գիտաւոր նախաղօք առատացույց զոհս կրակի»։ Եղիշե։

Հեթանոսական այս հին սովորության բարեդարձական մասը մուտք գործեց քրիստոնեությունի մեջ ու նույնացավ պատարագի իմաստին մեջ։ Հին ժամանակները քրիստոնյաները միասին կճաշեին, յուրաքանչյուր անձ իր կերակուրը եկեղեցին կբերեր։

Պողոս առաքյալին Կորնթացվոց թուղթերուն ու գործք Առաքելոցի ընթերցումներուն մեջ կհանդիպինք հետևյալ տողերուն։ Առաջին թուղթ Կորնթացվոց «Երբ մեկտեղ կժողովվիք եկեղեցիին մեջ, ուտելու ասեն ամեն մեկը առաջ իր ընթրիքը կառնե» (21), Եղբայրներս. Երբ մեկտեղ կժողովվիք ուտելու, իրարու սպասեցեք»։

Գործք Առաքելոցին մեջ կկարդանք, որ Պողոս Առաքյալ Եվտիքոս անուն մեռած երիտասարդը կենդանացնելու համար վերի սենյակը ելավ ու հացը կտրելով ճաշի նստավ։

Ասոնք փաստեր են, թե տաճարներուն յուրի հատարակաց ճաշեր տեղի կունենային։ Այսպիսի ապաստներու համար իբր հոտարարժու կարգվեցան յոթը սարկավագներ։

Արևմուտքի մեջ, երբ այս կարգի զոհեր տեղի կունենային, բազում գեղեցիկներ ու գեղխուրքաններ ալ տեղի կունե-

նային ու այս պատճառով եկեղեցու առաջին հայրերը Դ. դարեն սկսան պայքարել զոհի սովորութեանց դեմ ու մատաղի սովորութիւնները տակավ ու տակավ արևմտյան աղջերուն մոռ ընկնելով, կանգուն մնաց միայն հայոց քով։ Ներսես Շնորհալիին օրով մատաղի սովորութիւնը արդեն դադարած էր, մյուս ոգեկրուն քով, ու այս պատճառով «Էնդհանրականը»-ին մեջ կհիշեն «այլ յաղագս զրիսատնէից ոչ ունին սովորութիւն առնել զայսն»։

Առանձին օրեր սահմանված չէին մատաղին համար, բայց հայերն ընդհանրապես կընտրեին տոնական օրերը, որպեսզի հրավիրողները ու հրավիրյալները կարենային միասին հավաքվիլ, ինչպես կըսե Տարոնացին։

Հայաստանի մշակ պատակարդը աշնանամուտի շրջանին կընտրեր իր մատաղները ընծայելու համար, երբ ընութիւնը իր բարիքներով կվարձատրեր անոր աշխատութիւնը։

Աշնանամուտեն դատ հին հայերը ունեին նման ամառային հանդես մ՝ալ, որ կատարելապես կհամեմատվեր հայ հեթանոսական «Վանաորայ ամենարեր նստոց պտղոց, ուստից հիւրընկալ դիցն վանատրի», կըսե Ագաթանգեղոս։

Հայոց Տրդատ թագավորը, կոտորաւթիւնը Հայաստանեն ջնջելեն վերջ իր իշխաններով Աշտիշատ եկավ, ուր գտավ Լուսավորիչը ու հոն Աստուծո զոհութիւն տվավ ու պատարագներ մատուցանեց ապքատներու յայն բաժիններ հանելով։ Տրդատեն վերջ Վահան Մամիկոնյան իր հաղթութիւնները փառաբանեց Դվինի մեջ ու Աստուծո շնորհակալութիւն հայտներով պատարագ կմատուցանե խեղճ աղքատներուն ալ շատ յայն ու առատ բաժիններ տալով[1]։

Հին հրեաները ու մյուս հեթանոս ազգերը իրենց պատարագները կմատուցանեին ու ճաշեր կուտային սրբավայրերուն մեջ։

Մատաղի ճաշերուն ժամանակ դատակարդային խտրութիւն չըլլալու համար Հովհան Մանդակունին իր հայրապետական հաճերով ժողովրդին կթելադրեր, որ իսոն ճաշի նստին ու ոչ թե դատակարդ մը բազմի զարդարված դավթին մեջ, իսկ ուրիշ դատակարդ մ՝ալ նստել ներսը գետնի վրա։ Հայրապետը կհիշեցներ, թե «Վապպը տղբտատց կոչանք մէր», զոր պետք չէր եղծաներ հդոր ու անկարոտ մարդոց պատիվներ չուայլելով։

«Մեծամեծ բարեկամներդ մեծարելու համար ունիս երեք հարյուր վաթսուն և հինգ դեր, պոնվ անոնցմե մին աղքատաց և հոգվուդ նվիրե ճաշի կուչելով միայն որբերը, այրիները, նեղյալները, տառապողները, խեղճերը, կուրերը, կաղերը, կարոտյալները, դերիները, անոթիներն ու անմխիթար խեղճ ժողովուրդը»։

Հայրապետին այս խոսքերն մեծ ազդեցութիւն ունեցան ու մատաղի ճաշերու ընթացքին նախ աղքատները կհոգացվեին ու վերջը միայն կարգը կուգար հարուստներուն։ Այս բարի սովորութիւնը չարունակեց բավական երկար չոլան մը։

Հին օրենքներուն առընթեր դեվատցիները հատուկ կարվածներ չունեին ու տաճարներուն պատարագներեն ելկարակը վերն։ Այսպես ալ բոլոր հեթանոս աղգերուն մեջ նույն սովորութիւնը կտիրեր։

Հայ քուրմերը կանանցի զոհերեն ու պտուղներու բաժիններեն։ Երբ քրիստոնեութիւնը մուտք գտավ Հայաստանի մեջ, քուրմերը վախեցան, ապրուստեն պիտի զրկվեն, բայց Լուսավորիչ գիրենք ապահովեցուց, թե զոհերեն ու պտուղներեն քահանաներուն բաժին պիտի տրվեր։

Սուրբ Սահակին կանոններուն համեմատ քահանաները իրավունք ունեին սատանայու վարդավառի, զատիկի չաթաթյան, զատկի կիրակին, երկրորդ զատկին ու հինգերորդ բոլոր կիրակիներուն, ինչպես նախ վերափոխման արմտիքները կամ անոնց հատուցիր։ Քահանաներուն կպարտադրեր նախ նույն օրերը կատարված մատաղի

[1]) Փարպեցի, էջ 325։

որոշ մասը ստանալ, իսկ մյուս մասը կը-բաժանվեր մենաստաններուն։ Այսպես, քահանան կստանար մատաղ կենդանիներին կաշվի կեսը ու ճարպին երկու մասը կը-ղուր վանքին կանթեղներ վառելու հա-մար։ Եթե մատաղը ոչխար էր, դմակը վանքին կձգվեր, իսկ մյուս մասը քահանան կստանար։ Մասնավոր բաժինը կտրվեր քահանաներուն տան մեջ բնակվող պան-դուխտներուն համար։ Մնունդի, Տեառընդ-առաջին, Առաջավորաց պահքի ավարտու-մին, աղ ու հացից, Ղազարոսին, Ավաղ հինգշաբթի, Զատիկի երկուշաբթիին ու Համբարձման տոներուն ամբիվ զոհվելիք մատաղները պետք էր վանքերու մեջ գտնվող ուխտավորներուն տրվեր, որոնց հետ կրնային քահանաները ու վանականնե-րը հավասարապես ուտել։ Բարեկենդանի, Մաղկազարդի, Առաքելոց ու Մարգարեից տոներուն ամբիվ մորթվող կամաշոր մա-տաղները դարձյալ հասարակաց համար կգործածվեին։

Աշտարակեցիին կանոններուն մեջ տարբեր բաժիններու կհանդիպինք։ Պետք էին գլխավոր քահանաները ստանային մատաղին երկու ու կես մասը, իսկ մյուս քահանաները երկու-երկու մասերը։ Սար-կավագները կստանային մեկ ու կես մա-սը, իսկ գպիրները ու պարկեշտ այրիները մեկ-մեկ մասեր։

Տաթևացիին կանոնները տարբեր բա-ժանումներ կտնօրինեին։ Եպիսկոպոսն պետք էր ստանար մատաղ անասունի կուրծքը։ Տաներեցը պետք է առներ մատաղին ոտ-կողմյան երին, մյուս քահանաները պետք էին առնել մատաղի տիրսը, երիկամունքն ու լերդաբուծը ճարպով միասին ինչպես նաև ոտքերը ու գլուխը։ Այս անդամահա-տությունը չատ կողմերով կնմանի Մով-սիսյան օրենքներուն։

(Շարունակելի)

ՆՈՒՊԱՐ ՄԱԳՍՈՒՅՑԵԱՆ

Նիկոսիա (Կիպրոս կղզի)

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ [1]

(1826—1827 թ.թ. ռուս պարսկական պատերազմի հերոսներից)

Ամեն անգամ, երբ թշնամին դիմելով խաբեբայության խախտում է մեզ հետ ունեցած պայմաններն ու դաշինքը և հանկարծակի մտնում մեր երկրի սահմանները, ժողովուրդն իբրև մի անսպառ աղբյուր իր ծոցից հանում է այնպիսի հերոսներ, որոնք գուցե ուրիշ խաղաղ պայմաններում չնորհիվ իրենց ընտրած հասարակական տապարեզի մեջ անհայտության մեջ միայն հայրենիքին սպառնացող վտանգն է ստիպում այդպիսիներին թողնել իրենց հանգիստ կյանքը և գուրս գալ հանգուցն թշնամու դեմ։

Այդպիսի հերոսների շարքին է պատկանում 1826—1827 թ. թ. ռուս-պարսկական պատերազմի ժողովրդական հերոս Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը։

Շամշադինի շրջանում Հասանսու գետակի ձախ ափից ոչ հեռու գտնվում է պատմական Նոր Վարագա վանքը։ Գետակի աջ ափի բարձրության վրա տեղավորված է Հախում գյուղը, որը ժողովրդի մեջ հայտնի էր «Վարդապետի գյուղ» անունով, որովհետև այդ գյուղումն էր ծնվել ու մեծացել Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը, Նոր Վարագա վանքի նորոգողը և նրա վերջին վանահայրը։ Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը հետագայում իր քաջագործություններով անուն հանելով, աչքի ընկնող տեղ է գրավում ռուս-պարսկական պատերազմի ժողովրդական հերոսների շարքում։ Ժամանակի ռուսական զինվորական տարեգրությունները շատ դեպքեր են պատմում այդ հոգևորականի հանգուցն ու համարձակ քաջագործությունների մասին, որոնք հետագայում նյութ են տվել զինվորական տարեգիր Պոստոյի և ապա հայ պատմաբան Ալեքսանդր Երիցյանի՝ Մանուչարյանին նվիրված մոնոգրաֆիկ աշխատություններին։

Ղազախը և Շամշադինը հանդիսանում էին անհանգիստ շրջաններ ռուսական կառավարության համար։ Պարսկաստանի հետ պատերազմի ժամանակ ռուսական կառավարությունը պետք է լարեր իր ուշադրությունը իր ձեռքում պահելու համար շրջանները, որոնց իսկական տերերը համարվում էին ավազակարար բեկերը ու աղալարները, որոնք անպատիժ կերպով ճորտացրել և կեղեքում էին տեղական գյուղացիությունը։ Առանձնապես դանդ էր հայ գյուղացիների դրությունը։ Նույնիսկ ռուս-պարսկական պատերազմից հետո, երբ ռուսական կառավարությունը որոշ չափով զսպել էր սանձարձակ բեկերի ու աղալարների իշխանությունը, այդ շրջանների գյուղացիության վիճակը ուսումնասիրող առանձին հանձնարարությանց պաշտոնյա Զուբարյովը պատությանը նկարագրած իր պաշտոնական դեկուցման մեջ գրում է. «Առանձնապես պետք է զարմանալ, որ կառավարությանը հավատարիմ հայերը, որոնք ավերի հակում ունեն դեպի տրհնանները, երկրագործությունը և վաճառականությունը, այս երկրում ազգա-

---

1) Այս ուսումնասիրությունը պատկանում է հանգուցյալ Մարտ Ցեր Ավետիքյանին։ Հոդվածը խմբագրությանս տրամադրեց Ակադեմիայի պատմական ինստիտուտը։ Խմբ.

բնակության ավելի գործունյա և օգտակար դասը հանդիսանալով հանդերձ՝ տեղի խռովարար աղալարների ձեռքում զերի են. աղալարները նրանց դլխովին կողոպտում և թալանում են միայն այն պատճառով, որ նրանք նվիրված են ռուսական կառավարությանը...»[1]):

Եվ ամեն անգամ, երբ պարսկական դորքերը մոտենում էին այդ չրջաններին, տեղի աղալարները և բեկերը ապստամբությանը դրսչ բարձրացնելով ռուսական կառավարության դեմ, սկսում էին ավերել և թալանել հայ դյուղացիությանը, որը դուրկ լինելով ինքնապաշտպանության միջոցներից, իր բոլոր հույսը դնում էր սակավաթիվ ռուս դորքերի վրա, իսկ սրանք դուրկ էին հայերին էական օգնություն ցույց տալու հնարավորություններից։ Գուցե Շամչադինի հայերի այս անապահովական դրությունն է ստիպում Նոր Վարագա վանքի վանահայր Գրիգոր Մանուչարյանին կազմակերպել ալեցի հայ դյուղացիություններ և պաշտպանել նրան ալալարների ու բեկերի այդ հարձակումներից։

Թե ե՞րբ է ծնվել Գրիգոր Մանուչարյանը, մեզ հայտնի չէ. բայց սկսած 1803 թվից, երբ Կովկասի կառավարչապետ իշխան Ցիցիանովը արշավում է Գանձակի խանության վրա, մինչև ռուս-պարսկական պատերազմի վերջը՝ 1827 թ.,— երբ Շամչալինը մի քանի անգամ դառնում է պատերազմի թատերաբեմ,— ռուսական դինվորական տարեգրության մեջ իր դարմանալի, իր հանդուդն քաջագործություններով չարունակ հանդես է դալիս Գրիգոր Եպիսկոպոս Մանուչարյանը։ «Գրիգոր Եպիսկոպոսը», դրում է Երիցյանը, «Շամչալինի և Ղազախի հայերից 500 կտրիճ երիտասարդների մի հեծելայունդ էր կազմել և ինքը դարձել նրանց դնդապետը։ Վեղարը և հոգևորական տարազը ճաքելով տանը, նա հագել էր չինականի դուլպա, ծածկել ուչխարի մեծ դլխարքը, կապել թուրը և դաչույնը և հրացանը ձեռքին, սպիտակ նժույգի վրա նստած առաջնորդում էր իր դունդը թե՛ Գանձակի և թե՛ Երևանի վրա արշաված ժամանակ։ Գարսից հեծելազորի հետ կռիվ սկսողը և ճակատահար լինողը միշտ Գրիգոր Եպիսկոպոսն էր լինում իր կտրիճներով։ Սարսափելի է դառնում այս հեղ և Շամեսա հոդևորականը պատերազմի դաշտում թուրը հանած մինոցին։ Մինչև այսօր էլ ավանդարար քաջագործության հրաչքներ են պատմում Մանուչարյանց Գրիգոր Եպիսկոպոսի մասին»[1])։

Կովկասի կառավարչապետ իշխան Ցիցիանովը տեսնելով Մանուչարյանի քաջագործությունները պատերազմի դաշտում նրա կրծքին կախեց Ս. Գեորգի չորրորդ աստիճանի խաչը, որը տրվում էր առանձնահատուկ աչքի ընկնող քաջագործությունների համար, և նշանակեց 300 ռուբլի մշտական թոշակ։ Ցիցիանովի հաջորդը՝ կոմս Գուտովիչը 1808 թվին Երևանի վրա արշավելու ժամանակ հետը տարավ Մանուչարյանին իր դդակեցի ձիավորներով։ Այստեղ Նախիջևանը դրավելիս Մանուչարյանը մեծ կատորած պատճառեց պարսիկներին և թշնամու արյան մեջ չդադրված ինքն էլ վերք ստացավ ու հազիվ ազատվեց մահից։ Գուտովիչի միջնորդությամբ Ալեքսանդր առաջին կայսրը այս քաջագործությունների համար առանձին հրովարտակով Մանուչարյանին արժանացրեց Վլադիմիրի և Անայի շքանշանների և 300 ռուբլու փոխարեն 600 ռ. թոշակ նշանակեց։

Սրանից հետո մինչև 1826 թվը, երբ պարսիկները առանց պատերազմ հայտարարելու նեռս խուժեցին մեր սահմանները, Մանուչարյանը քաջվում է Նոր Վարագա վանքը և առանձնացած կյանք վա-

1) Акты Кавказской археографической комиссии, том VII, стр. 35.

1) Ա. Երիցյան—«Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայը 19-րդ դարում», Մասն կII. Թիֆլիս, 1894 թ., էջ 248—244։

բում։ Բայց երբ լսում էր, որ ավազակները քշել են հայ գյուղացիների տավարը (որ այն ժամանակ սովորական երևույթ էր) կամ մարդ են սպանել, նա նորից վիզարը փոխում էր փափախի ու զինվելով ընկնում ավազակների հետևից և սարսափահար անում նրանց։

Հայտնի է, որ Եփրեմ կաթողիկոսը նեղացած Երևանի սարդարի քանությունից և պարսիկ պարտատերերի անիրավ պահանջներից, 1821 թ. ճանապարհ է ընկնում Էջմիածնից և Նախիջևանի վրայով մտնում ռուսաց սահմանը, հանում Շուշի։ Կովկասի կառավարչապետ հայտնի Երմոլովը քաղաքական բարդություններից խուսափելով՝ կաթողիկոսին խորհուրդ է տալիս հրաժարվել իր կոչումից և ստանձնանալ Հախպատի վանքում։ Եփրեմ կաթողիկոսը այստեղ ապրում է մինչև 1826 թ. օգոստոս ամիսը։ Երբ սկսվում է ռուս-պարսկական պատերազմը, Թիֆլիսում հայերը երկյուղ են կրում, որ պարսիկները կարող են հարձակվել Հախպատի վրա և դերի վերցնել Եփրեմ կաթողիկոսին։ Պետք էր նրան Հախպատից փոխադրել, բայց դա այնքան էլ հեշտ բան չէր, որովհետև պարսից հեծելազորի առանձին խմբերը անցներով ռուսաց սահմանը՝ Լոռու ձորով իջել էին Բորչալուի գաչար և միացել տեղի ապստամբ աղալարների հրոսակների հետ ու կտրել բոլոր ճանապարհները։ Այսպիսի մի դժվար ժամանակ Թիֆլիսի Քիմի առաջնորդ հայտնի Ներսես Աշտարակեցին այդ գործը հանձնում է Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանին։ Վերջինս 40 ձիավորով 1826 թ. օգոստոսի 6-ին հասնելով Հախպատի վանքը, վերցնում է Ծերունի Եփրեմ կաթողիկոսին և ոլոր-մոլոր ճանապարհներով իջնում Բորչալուի գաչար։ այստեղ նրան գետի մոտ նրանք հանդիպում են 300 հոգուց բաղկացած պարսիկ հեծելազորի։ Սկսվում է կատաղի կռիվը։ Մանուչարյանը սուրը ձեռքին ճակատապարհ է բաց անում, հետևից տանելով Ծերունի կաթողիկոսին։ Ականատեսները պատմում են, որ կային բոպեներ, երբ թվում էր, թե այլևս ազատվելու հույս չկար։ Կռվի ժամանակ սպանվում է Մանուչարյանի ձին, բայց նա մի ուրիշ ձի նստելով և ճեղքելով թշնամիների գունդը, ազատում է կաթողիկոսին և հասցնում Թիֆլիս։ Մանուչարյանի խմբից 9-ը հոգի ընկնում են պատերազմում, բայց կռիվը շատ թանգ է նստում պարսիկներին։

1826 թվին պարսիկների հանկարծակի հարձակումը անսպասելի էր Ռուսաստանի համար, որը խաղաղություն պահպանելու նպատակով դեսպանություն էր ուղարկում շահի մոտ, բայց ռուսական դեսպան Մենչիկովը պետ չվերադարձած, պարսիկները սերս են խլում մեր սահմանները։ 1826 թ. հուլիսի 16-ին Երևանի սարդարի եղբայր Հասան խանի զորքերը թափվեցին Փամբակի և Շորագյալի սահմանապահ սակավաթիվ ռուս զորքերի վրա, որոնք մեծ մասամբ տեղավորված էին հայ գյուղերում։ Զինվորների հետ միասին հայ գյուղացիներն էլ զարմանալի կերպով դիմադրում էին պարսիկներին։ Միաժամանակ պարսից գլխավոր բանակը, որի թիվը հասնում էր 60·000-ի, թագաժառանգ Աբբաս Միրզայի առաջնորդությամբ մտավ Ղարաբաղ։ Պարսից զորքերը հասան Անդրկովկասի նոր նվաճած գավառները։ Այս ծանր բոպեին ամբողջ Անդրկովկասում ռուսներն ունեին ընդամենը մոտ 35·000 զորք, որոնք ցրված էին Կասպից ծովից մինչև Սև ծովը, պահում էին քաղաքները, ամրոցները և սահմանները։ Երկրի պաշտպանության համար կառավարչապետ Երմոլովը Թիֆլիսում զինվորական խորհրդի է հրավիրում նաև հայերի նեկայացուցիչներին, որից հետո նա դիմում է Եփրեմ կաթողիկոսին, խնդրելով ապստամբներին դադարեցնել համար Շամշադին ուղարկել Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանին։ Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը իր խմբով կարճ ժամանակում գալիս է Ղազախի և Շամշադինի ապս-

տամբներին, հետ է քշում պարսկական հրոսակներին, որոնք ձգտում էին թալանել գյուղերը և բնակիչներին գերի տանել: Նա խլում և իրենց գյուղերն է վերադարձնում 1000 տուն Թուրք գյուղացիների, որոնք ապստամբ աղալարների թելադրությամբ թողնելով իրենց տունն ու տեղը, անցնում էին Պարսկաստան: Մանուչարյանը պահպանում է ճանապարհները, ամեն տեղ պահակներ նշանակելով, նա մի քանի անգամ սովից ազատում է ռուս բանակը փր և մյուս հայերի տներից պաշար հավաքելով զորքի համար: Համառձակ պաշտոնական արխիվային նյութերի՝ ամենավտանգավոր ժամանակ, երբ կարիք էր լինում, ռուսական բանակի կարևոր դրությունները Մանուչարյանը ինքն էր անձամբ տանում Թիֆլիս Երմոլովին կամ ուղարկում իր եղբոր միջոցով: Մանուչարյանի եղբայրը անձնական քաջությամբ հետ չէր մնում նրանից: Հախում գյուղում պատմում են, որ մի օր Մանուչարյանի եղբայրը, Երբ մի հենձաձ մի շատ կարևոր տեղեկություն էր տանում Երմոլովին, նրան չրջապատում է պարսից հեծելազորը. Մանուչարյանի եղբայրը դիմադրություն ցույց տալուց հետո, երբ տեսնում է, որ ինքը չորս կողմից չրջապատված է և փրկություն չունի, ձիով թռչում է դեպի կողքի անդունդը. նրա ձին փչրվում է, իսկ ինքը անվտանգ ազատվելով շարունակում է ճանապարհը: Այն ժամանակ, Երբ սրբոյիկները չտապ կերպով փախչում են թե՛ Ղարաբաղից և թե՛ Սևանի ափերից, կաուավարչապետ Երմոլովը իր փոքրիկ բանակով գտնվում էր Հասանսու դետակի ափին, ուր նա գնացել էր Շամշադինը և հարևան Թաթարական դիստանցիաները խաղաղացնելու: Մանուչարյանը վերջ տալով Շամշադինի մահմեդական աղալարների չարժմանը, որը մեծ վտանգ էր սպառնում տեղական հայ բնակչությանը, հաղարավոր գերի և փախստական ընտանիք վերադարձնում է իրենց գյուղերը, ապանում ապրանքներին, հետ է քշում պարսկական հրոսակներին, որոնք ձգտում էին թալանել գյուղերը և բնակիչներին գերի տանել: Նա խլում և իրենց գյուղերն է վերադարձնում 1000 տուն Թուրք գյուղացիների, որոնք ապստամբ աղալարների թելադրությամբ թողնելով իրենց տունն ու տեղը, անցնում էին Պարսկաստան: Մանուչարյանը պահպանում է ճանապարհները, ամեն տեղ պահակներ նշանակելով, նա մի քանի անգամ սովից ազատում է ռուս բանակը փր և մյուս հայերի տներից պաշար հավաքելով զորքի համար: Համառձակ պաշտոնական արխիվային նյութերի՝ ամենավտանգավոր ժամանակ, երբ կարիք էր լինում, ռուսական բանակի կարևոր դրությունները Մանուչարյանը ինքն էր անձամբ տանում Թիֆլիս Երմոլովին կամ ուղարկում իր եղբոր միջոցով: Մանուչարյանի եղբայրը անձնական քաջությամբ հետ չէր մնում նրանից: Հախում գյուղում պատմում են, որ մի օր Մանուչարյանի եղբայրը, Երբ մի հենձաձ մի շատ կարևոր տեղեկություն էր տանում Երմոլովին, նրան չրջապատում է պարսից հեծելազորը. Մանուչարյանի եղբայրը դիմադրություն ցույց տալուց հետո, երբ տեսնում է, որ ինքը չորս կողմից չրջապատված է և փրկություն չունի, ձիով թռչում է դեպի կողքի անդունդը. նրա ձին փչրվում է, իսկ ինքը անվտանգ ազատվելով շարունակում է ճանապարհը: Այն ժամանակ, Երբ սրբոյիկները չտապ կերպով փախչում են թե՛ Ղարաբաղից և թե՛ Սևանի ափերից, կաուավարչապետ Երմոլովը իր փոքրիկ բանակով գտնվում էր Հասանսու դետակի ափին, ուր նա գնացել էր Շամշադինը և հարևան Թաթարական դիստանցիաները խաղաղացնելու: Մանուչարյանը վերջ տալով Շամշադինի մահմեդական աղալարների չարժմանը, որը մեծ վտանգ էր սպառնում տեղական հայ բնակչությանը, հաղարավոր գերի և փախստական ընտանիք վերադարձնում է իրենց գյուղերը, ապանում ապրանքներին և կարգը վերահաստատում: Երմոլովը անձամբ տեսնելով Մանուչարյանի քաջագործությունները և բարձր գնահատելով ռուսական բանակի մատուցած նրա ծառայությունները, զրկում է նրան և խնդրում տալ, թե ինչո՞վ կարող է շնորհակալություն հայտնել նրա օգնության փոխարեն: Մանուչարյանը պատասխանում է, որ ինքը անձամբ իրեն հոգևորական ոչ մի բանի կարոտ չէ, բայց անօրենություն է համարում, որ Թուրք աղալար և բեգ կոչված ազնվականները անիրավաբար տիրանան հայ գյուղերին և նրանց հողերին, Կամ ծանր հարկեր առնելով կեղեքեն հայ գյուղացիությանը, և այդ էլ այժմ, երբ վերջ է դրվել պարսկական բռնություններին և երկիրը անցել է ռուսական իշխանությանը: Մանուչարյանը խնդրում է Երմոլովին իրեն վարձատրություն ոչ միայն Շամշադինի, այլև մյուս Թուրքաբնակ գավառների հայ գյուղերը ազատել աղալարների և բեկերի բռնությունից և այդ գյուղերը հայտարարել արքունական: Այս մտքով էլ նա մի գրավոր տեղեկագիր է ներկայացնում Երմոլովին, որին վերջինս 1826 թ. հոկտեմբերի 1-ին պատասխանում է հետևյալ դրությամբ, որը մենք ամբողջովին առաջ ենք բերում հին թարգմանությամբ: «Սրբազան հայր Գրիգոր տրքեպիսկոպոս հայոց, ողորմած տեր. ըստ վկայության Վրաստանի հայոց առաջնորդի[1]) ձեր սրբազնության ջերմեռանդ ծառայության մասին առ պետությունն, որին օգտավետ լինելու մշտական պատրաստությունն էր հայտնած, ես հրավիրեցի Ձեզ երբայլ Շամշադինի գավառակը, ուր տեղի բնակիչները պարսից թելադրությամբ վիդոմման մեջ էին, իսկ Թուրք տանուտերներն էլ մեծ մասամբ մեզ դավաճանեցին: Գիտենալով, որ ժողովուրդը ընդհանրապես ձեր սրբազնությանը հարգում է և հավատ է ընծայում, ես խնդ-

1) Նիքսես Ա. Տաղարակցու.

դրեցի ձեզ խաղաղացնել բնակիչներին, որպեսզի նրանք իրենց միաձայնությամբ չհեռանին ուխտագրումներին։ Դուք, ի կատարյալ բավականություն իմ բոլորովին արդարացրիք ձեր տուժնորդ-հովվապետի թե ընտրությունը և թե ձեր մասին ունեցած բարի կարծիքը։ Ձեր անձը վտանգի ենթարկելով, Դուք սակավաթիվ մարդկանցով դիմադրեցիք ապստամբներին, քշելու, արտաքսելու հայ գերդաստանները։ Ահավասիկ, Դուք ամեն կերպ օգնում էիք երկրի գլխավոր վերակացու իշխան Թարխանովին տերության կամքը կատարելու։

«Զորաց բանակի հետ գալով Հասանսու, ես ինքս վկա եղա ձեր գովելի գործերին, վասն որս սուրբ պարտք եմ համարում ինձ հայտնել ձերդ սրբազնության ի դիմաց տերության կատարյալ գոհունակություն։ Հաճելի է ինձ հուսալ, թե դուք այսուհետև ևս չեք դադարիլ պատրաստ լինելու հոգևոր ծառայության թագավոր կայսեր։

«Հարգելով Ձեր ինձ մատուցած տեղեկագրի մեջ հայտնած մտքերը, ես հրամանագրեցի Շամշադինի գլխավոր վերակացվին, որ նույն գավառակի հայերին բոլորովին ազատելով թուրք աղալարների իրավասությունից, արձանագրե նրանց որպես արքունի։ Իսկ ինչ որ կվերաբերի բոլոր հայոց ընդհանուր կախումն ունենալուն մնացած թուրքական գավառներում, ես այդ ևս անմիջապես կկարգադրեմ և պաշտոնապես կհրատարակեմ ի գիտություն ամենեցունց։

Ստորագրած է Ալեքսանդր Երմոլով[1]։

Մեր կարծիքով Մանուչարյանի տմեծանամեծ ծառայությունը, որը անբաժան է նրա գործած քաջագործություններից իբրև ռուս-պարսկական պատերազմների աչքի ընկնող հերոսի 1809 թ. սկսած մինչև 1827 թ., պետք է համարել հայ գյուղերի ազատագրելը աղալարների և բեկերի ծանր իշխանությունից, որը կատարվեց նրա անմիջական մասնակցությամբ և միջնորդությամբ։

Երմոլովի՝ Կովկասից հեռանալուց հետո Մանուչարյանը շարունակում է իր աջակցությունը ռուսական բանակին նաև 1827 թ. մինչև ռուս-պարսկական պատերազմի վերջը, երբ երկրի կառավարչապետ էր նշանակված զորապետ Պասկևիչը։

Մանուչարյանի կատարած քաջագործություններն ստիպում են նույնիսկ Պասկևիչին միջնորդել, որ Մանուչարյանը վարձատրվի ըստ արժանվույն։ Այդ միջնորդության համաձայն Գրիգոր Մանուչարյանը դառնում է Հասանսու գետի ձորի գյուղերի և հողերի տերը, միաժամանակ իբրև արքեպիսկոպոս իր անձի մեջ միացնելով թե հոգևոր և թե աշխարհային իշխանությունը։

Նախկին Հաճուսի գյուղի կենտրոնում կառուցված է փայտաձագ հողե կտուրով գյուղական եկեղեցին։ Դրա ներսում գտնվում է Գրիգոր Մանուչարյանի դերեզմանը։

---

[1] Երիցյան Ա.—Ամեն. հայ. կաթող. և Կովկ. հայք XIX դարում, մասն. Ա., էջ 246—248։

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՀԱՅՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ [1]

Շարականները հայ եկեղեցու կրոնական բանաստեղծություններն են։

Դրանց հավաքածուն նույնպես կոչվում է շարական։ Միջին հայերենում անհատ երգը երգերի ամբողջական հավաքածուից զանազանելու համար առաջիններին կոչվում էին շարական, իսկ հավաքածուն՝ Շարականոց։ Բայց ընդհանրապես այս տարբերությունը նկատի առնված չէ և այժմ երկու խմաստով էլ ասվում է շարական։

Շարականները երկու տեսակ են. առաջինը՝ այն երգերը, որոնք հայ եկեղեցին ընդունել է պաշտոնապես և ամեն մի համապատասխան տոնի առթիվ երգվում է. երկրորդ՝ այն երգերը, որոնք թեև այս ու այն հեղինակի կողմից կազմված, բայց պաշտոնապես ընդունված չեն եկեղեցուց և չեն երգվում եկեղեցում։ Դրանք կոչվում են պարականոն շարականներ։ Շարականներն ունեն իրենց եղանակը, և մեր հին ձեռագրերը ամեն անգամ հատուկ խազերով (նշաններով) նշանակում են այդ եղանակները։ Դժբախտաբար այդ խազերը մեզ անծանոթ են. չկա ոչ մի հին ձեռնարկ, որը սովորեցներ մեզ այդ խազերի արժեքը, այնպես որ շարականների եղանակները թեև ճանաչված են, բայց մենք նրանց հին եղանակը չգիտենք։ Սերունդները ամբողջ ավանդաբար կրկնել են միշտ այդ եղանակները և հասցրել են մեզ։ Բայց թե ինչ հարազատությամբ, այդ հայտնի չէ։ Առաջին անգամ Գեվորգ Դ. կաթողիկոսը ուզեց շարականների հարազատ եղանակը գտնել և ճանաչելի տալ, որպեսզի բոլոր եկեղեցիներում արգեցողությունը հաստատուն և միատեսակ լինի։ Լինելով պոլսեցի, Պոլսում ճանաչել էր Բաբա Համբարձումի կոչված երաժշտագետին, որը սքանչելի շարականագետ էր։ Բաբա Համբարձումի աշակերտն էր Նիկողայոս Թաշճյանը, որին Գևորգ կաթողիկոսը հրավիրեց Պոլսից Էջմիածին շարականները կարգավորելու։ Գևորգ կաթողիկոսի կարգադրությամբ Էջմիածին են հրավիրում հայ բոլոր շարականագետները խորհրդակցելու շարականների կարգավորման և ճանաչման մասին։ Գևորգ կաթողիկոսն ու Թաշճյանը խորհրդակցությունից հետո համեմատեցին յուրաքանչյուրը իրենց խմացած շարականների հետ և աշխատելով գտնել հարազատը ճանաչեցին։

Ասացինք, որ շարականները թեև հին խազեր ունեն, բայց նրանց նշանակությունը մեզ հայտնի չէ։ Թաշճյանը խազերից ընտրեց յոթ հատ, որ կոչեց փո, է, վե, բե, իտ, նե, սա։ Դրանք համապատասխանում են եվրոպական ճայնանիշներին։ Այսպիսով կազմեցին առաջին յոթնյակը, նրանով ճայնագրեցին ամբողջ շարականը և տվին հրատարակության։ Դա մի մեծածավալ և մեծարժեք գործ է, որ տպված է Էջմիածնում և կոչվում է «Ճայնագրյալ շարական»։ Պարականոն շարականները զանազան ձեռագրերից հավաքելով հրատարակեց Սահակ Վ. Ամատունին (Վաղարշապատ 1941 թ.)։

Հանգուցյալ Կոմիտաս վարդապետը մտածեց գտնել ու վերականգնել կորած շարականների հին հարազատ եղանակները, ուրիշ խոսքով գտնել հին խազերի նշանակությունը։ Առաջնորդվելով այն գաղափար

---

1) Տպելով այս հոդվածը խմբագրությունը խնդրում է մանավանդ նրանց արտահայտվել այս հարցի շուրջը։ Խմ Հ.

բով, որ ձայնի աստիճանները միարն յոթ են, իսկ հին հայոց խազերի թիվը մի քանի տասնյակ է, նա մտածեց, որ հին հայոց խազերը ներկայացնում են ոչ միայն դիւաւոր ձայները, այլև նրանց մի մասն էլ ներկայացնում է մի քանի ձայների զումարը։ Ուրիշ խոսքով ինչպես հայերեն տառերի գոյության մեջ ունենք և, ևն և փակագիր (երկու տառերի միացումներ), այսպես էլ խազերի մեջ։ Իբրև հիմք ընդունելով արդի եղանակները և առաջնորդվելով փակագիր կամ բաղադրյալ խազերի գաղափարով, նա վերականգնեց շարականների հին եղանակը։ Այս գործի վրա Կոմիտասը աշխատեց շատ երկար տարիներ և կազմեց մի մեծ աշխատություն, որ չկարողացավ հրատարակության տալ։

Շարականների մասին կան բազմաթիվ լուրջ աշխատություններ, որոնցից գլխավորն է Ավետիքյանի «Բացատրություն շարականաց»-ը, (տպ. Վենետիկ)։ «Աբրամատ»-ի մեջ ընդարձակ ուսումնասիրություն ունեն Սահակ վարդ. Ամատունին, հանգուցյալ ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը. շարականների մասին գրել է նաև նորթես վարդապետ Տեր Միքայելյանը (դեմատեռն ինքով)։ Ուսումնասիրությունների մեջ ոմանք շարականների սկիզբը դնում են հինգերորդ դարից, իսկ ոմանք ավելի ուշ։ Ընդունված կարծիքը 5-րդ դարն է համարում շարականների հորինման ժամանակը։ Հայտնվում է այն միտքը, որ իբր թե շարականների խումբը գրել են Սահակ Պարթևը («Պարգևատուն ամենեցունց») և Մեսրոպ Մաշտոցը («Ով կենդանաղոյս»)։ Ուրիշները, սակայն հաստատում են, որ շարականներն ավելի ուշ են հորինված, սկսած ութերորդ դարից և ավելի հետո։ Այս կարծիքին են ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը և Նորթես վարդապետը իրենց վերոհիշյալ ուսումնասիրությունների մեջ՝ հիմնվելով պատմական և կրոնական հիմունքների վրա։ Այս կարծիքին է նաև ակադեմիկոս Հ. Աճառյանը, որն իր կարծիքը հիմնում է շարականների ոչ ոսկեդարյան լեզվի վրա։

ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ



ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

Մեր եկեղեցական գործիչներից Գևորգ Դ. կաթողիկոսին իրավամբ կարելի է դասել եկեղեցու լուսավորիչների շարքը։ Ընդունելով կաթողիկոսական աթոռը նա իր ամենօրյա հոգսը դարձրեց հայ եկեղեցին բարեկարգելու խնդիրը։ Անհրաժեշտ էր ամրապնդել եկեղեցու ներքին կարգ ու կանոնը, կարգավորել ժամակարգությունը, ծիսակատարությունները, պատշաճ բարձրության վրա դնել երգեցողությունը և այսպիսով ավելի բարձրացնել հայ եկեղեցու հեղինակությունը։

Գևորգ Դ. կաթողիկոսը այդ նպատակներից ելնելով նախ ձեռնարկեց եկեղեցական կանոնական ծիսական պրակտիկայի վերանայմանն ու հրատարակմանը։ Նրա օրով վերջնական մշակման ենթարկվեցին ու հրատարակվեցին ս. պատարագի աբարողության խորհրդատետրը, եկեղեցական ձեռնադրությունների վերաբերող գրքերը, ժյուռոնօրհնության, կաթողիկոսական ձեռնադրության կանոնագրքերը, մի շարք ժամագրքեր և այլն։ Ժամասացությունը և եկեղեցական որոշ ծիսակատարություններ լավագույնս ավելորդ կրկնության բնույթ կրող մի շարք աղոթքներից և սաղմոսներից, որով ժամակարգությունը ոչ միայն թեթևացվեց, այլև այն դարձավ ավելի պարզ ձևի մեջ։

Առավելապես մատնահոգված լինելով մեր եկեղեցական երգեցողությունն անաղարտ պահելու, ինչպես և մոռացությունից և աղավաղումից փրկելու խնդրով, Գևորգ Դ. կաթողիկոսը Ս. Էջմիածին հրավիրեց ժամանակի հայտնի երգիչներին ու մանավանդ նոտաներով ձայնագրել տվեց մեր շարականները, մեղեդիները և այլ հոգևոր երգեր։ Գևորգ Դ. կաթողիկոսի շնորհիվ է, որ այսօր մենք ունենք եկեղեցական հարստատ երաժշտություն։

Սակայն Գևորգ Դ. կաթողիկոսի համար այսքանը դեռևս շատ քիչ էր հայ եկեղեցին ու Մայր Աթոռը իր կոչման բարձրության վրա պահելու տեսակետից։ Անհրաժեշտ էր ունենալ եկեղեցական աշխարհ, դաստիարակված և լուսամիտ կադրեր։ Կյանքը հրամայական պահանջում էր քայլել ժամանակի պահանջների համեմատ, այլևս հնարավոր չէր բավարարվել վանական միջավայրում սահմանափակ կրթություն ստացած մարդկանցով և նրանց ձեռքը հանձնել վանքերի, եկեղեցիների և թեմերի ղեկավարությունը։

Կար նաև մի հանգամանք։ Ցարական քաղաքականության հետևանքով կովկասյան ժողովուրդների զավակները, որոնք ստանում էին մայրենի լեզվով կրթություն այդ ժողովրդների միջոցներով պահվող դպրոցներում, հնարավորություն չունեին բարձրագույն կրթություն ստանալ ռուսական համալսարաններում։ Այդ ժողովուրդների միջակ և չքավոր խավերը նյութական հնարավորություն չունեին իրենց ուսումնածարավ երեխաներին Ռուսաստանի լուսավոր կենտրոնները ղրկելու բարձրագույն կրթություն ստանալու համար։

Մյուս կողմից առաջ էր քաշվում հայկական եկեղեցական-ծիսական պպրոցների պատրաստված ուսուցիչներ մատուցարարելու սուր պահանջը։ Այս կարիքները հոգալու համար Գևորգ Դ. կաթողիկոսը հիմնեց ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը։

Պետք է ասել, որ ճեմարանը լրիվ չափով կարողացավ այս պահանջներին գոհա-

ցում տալ և կենսապարծեց այն բոլոր խնդիրները, որոնք պատմականորեն դրվեցին յուր առաջ։

Ճեմարանի գործունեությունը Էջմի ընդմնավոր և արդյունավետ։ Ճեմարանը տվեց մի շարք ականավոր եկեղեցականներ, հայրապետներ, գրականագետներ, գրողներ, հասարակական գործիչներ և բազմաթիվ լավագույն ուսուցիչներ։

Մեծ էր ճեմարանի պատմական և հասարակական դերը, մանավանդ նրանով, որ այն հանդիսանում էր համայն հայության բարձրագույն դպրոցը։

Ճեմարան էին դալիս ուսանելու ոչ միայն կովկասում ապրող հայ ժողովրդի, այլև արտասահմանյան (Պարսկաստանի, Պոլսի, Ռումինիայի, Բուլգարիայի և այլ վայրերի) հայությունի զավակները։ Այսպիսով ճեմարանի լուսավոր դռները բաց էին բոլորի առաջ։

Գիշերօթիկ դպրոցի պարմանները, լավագույն դասատուների կազմը, որով ապահովված էր ճեմարանը, ավելցին փայլուն արդյունքներ։

Ճեմարանը հայ եկեղեցուն ավել է ականավոր եկեղեցականներ հանձին Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Զեորեքչյանի, Կիլիկիայի Տան Նորընտիր կաթողիկոս Տ. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի, Կարապետ Եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի, Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրաբյանի, երաժշտագետ Կոմիտասի, լեզվաբան Մագուտյան վարդապետի, երաժշտագետ Սպիրիտոն Մելիքյանի, ականավոր հայագետներ՝ Մանուկ Աբեղյանի, Ստ. Մալխասյանի և այլն։

Ի՞նչ կարող ենք հուսալ և ակնկալել մենք ներկայումս բացվելիք Հողևոր ճեմարանից։

Ներկայիս ճեմարանը կոչված պիտի լինի առաջին հերթին հողևոր կադրեր պատրաստել թե՛ Միության և թե՛ արտասահմանյան եկեղեցիների համար։ Այս պիտի կազմի նրա աշխատանքի հիմնական ինդիրը։ Սակայն, իհարկե, չի կարելի ճեմարանը վերաբանալով սահմանափակվել միայն դրանով։ Մեր կարծիքով ճեմարանը պիտի դրսևորվի ոչև հայ եկեղեցական անցյալ կյանքի ուսումնասիրությամբ, քանի որ մեր անցյալը եկեղեցական կյանքի հետ են կապված եղել ոչ պակաս պատմական հետաքրքրական և ուսումնասիրության արժանի խնդիրներ։

Բացվելիք ճեմարանը պիտի ունենա բացառապես կրոնական թեքում, պիտի խորանա և մասնագիտանա հասկացեալ մեր եկեղեցական և հոգևոր կուլտուրայի բնագավառներում, իսկ այդ տեսակետից մենք դեռ շատ անելիքներ ունենք։

Չնայած մեր եկեղեցական անցյալ կյանքի ուսումնասիրության դեռ կատարված են որոշ աշխատանքներ և հրապարակի վրա են այնպիսի լուրջ գործեր, ինչպիսին է, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի «Ազգապատումը» և այլն, այնուամենայնիվ չի կարելի սպառված համարել մեր եկեղեցական պատմության, մեր անցյալ եկեղեցական կյանքի լուսաբանությունը և նրանց ուսումնասիրությունը և սխալված չենք լինի, եթե ասենք, որ այն նոր-նոր է սկսում ուսումնասիրվել և բազմակողմանիորեն պարզաբանվել։

Մեր եկեղեցու պատմության այդ նոր հետազոտողները, այդ նոր լուսաբանողները մեր եկեղեցական կյանքի բազմազան ինդիրների նոր մեկնիչները պետք է լինեն հոգևոր ճեմարանն ավարտողները։

Վերոհիշյալ բոլոր հանգամանքները ինքնին արդարացնում են ճեմարանի բացումը, որպես անհրաժեշտություն։

Ողջունելով Մայր Աթոռի այս հոյակապ ձեռնարկությունը ի բոլոր սրտե հաջողություն ենք ցանկանում բացվելիք հոգևոր ճեմարանին և Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Ամենապատիվ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Զեորեքչյանին իր այս պատմական, ուշագրավ ձեռնարկումի մեջ։ Ռ. ՎԱՐԴԱՊԵՏ

ՀԱՑԱՍՏԱՆ ԵՐԿԻՐ

Ահա լեռներն Հայքենի
Կարմիր արև են հագեր,
Այդն է Հայոց զարթոնքի,
Որ մեզ կուտա հրաշքեր։

Ազատության տենչով վառ
Ողջունենք նորն Հայաստան,
Ուր մեր հայրերն տենդահար
Դեպի վերելք կընթանան։

Ողջո՛ւյն ի սիրուտ հայերեն
Անմահ ճակատդ, Արարատ,
Խունկ ու համբույր սրտերեն
Իջմիածնի լուսակարք։

Թող ծոցիդ մեջ ըլլա թող
Մեր հույսն ու մեր վերեկման,
Լուսավորչի Աջն հաղթող
Մեր սրբությանց պահապան։

ՂՈՒԿԱՍ ԻՐԱԳՍՈՒԹՅՈՒՆ.

Նիկոսիա
(Կիպրոս կղզի)

ՎԵՑ ԱՄԻՍ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ [1])

(Ճանապարհորդական տպավորություններ)

Կարմիր բանակայիններին երեխաներին օգնող հայ տիկիններին մի խոշոր կազմակերպություն գործում է Երուսաղեմում։ Մեր այնտեղ եղած ժամանակ կազմակերպության անդամները թել էին սարքել ու ֆուֆայկաներ էին գործում Ստալինգրադի երեխաների համար։ Աշխատանքը որակով և արագ կատարելու համար նրանք մրցում էին իրար մեջ։

Հայ տիկինների այս կազմակերպությունը սերտ հարաբերության մեջ էր գտնվում տիկին Իրինայի հետ։ Տիկին Իրինան ռուս հայրենասեր կին է։ Նա ապրում է Եգիպտոսում, իսկ մեր ճանապարհորդության ժամանակ ամառանոց էր եկել Երուսաղեմ։ Սա հանրածանոթ կին է։ Տիկին Իրինային իր լավագույն նրաժշտական դերձերից մեկն է նվիրել ռուս մեծ երաժշտագետ Վերդիսկին։ Մենք եղանք տիկին Իրինայի մոտ։ Նա ցյուղը ձեռքին ֆուֆայկա էր գործում։

— Ստալինգրադի երեխաների համար եմ գործում,— հայտնեց մեզ հպարտությամբ։

Հիշում եմ, թե նա ինչպիսի հիացմունքով էր խոսում իր այն իրերի մասին, որոնց արտադրանքը ռուսական ծագում ունեն։ Ազնիվ հոգով տիպիկ ռուս կին է նա։

Ի դեպ, տիկին Իրինայի խորհուրդով մենք այցելեցինք Երուսաղեմի ռուսական այն տաճարը, որը կառուցված է ռուս ժողովրդական հերոս, մեծ իշխան Ալեքսանդր Նևսկու անվամբ։ Պատմում էին, որ Ստալինգրադի ծանր օրերին, տիկին Իրինայի հանձնարարությամբ ռուս քահանաները ժողովրդական հերոս Ալեքսանդր Նևսկու այս տաճարում պատարագ են մատուցել ռուսական զենքի հաջողության համար՝ ընդդեմ գերմանական ֆաշիստների։ Նևսկու տաճարը, ինչպես պարզվեց, կառուցվել է 1887 թվին։

Ճանապարհորդության ժամանակ մենք հանդիպեցինք բազմաթիվ հայ մասնագետների, որոնք մեծ անուն և համբավ ունեցող մասնագետներ են՝ բժիշկներ, դյուղատնտեսներ, ճարտարապետներ, երգիչներ, դերասաններ և այլ մասնագետներ։ Այդ մասնագետների մեծ մասի հայացքները դեպի Սովետական Հայաստան են ուղղված։ Ես հիշում եմ կավիրեում երգչուհիներ— Արմինե Զաքարյանին և Գոհարիկ Թաչատրյանին, որոնք աչքի ընկնող երգչուհիներ

---

1) Սկիզբը տես ամսագրիս նախորդ համարում։

են, ելույթ են ունենում տեղական ռադիոյում, նրանք ջերմ հայրենասերներ են։

Մեր եղած հայկական որոշ դաղութներում մինչև Հայրենական պատերազմը շատ

Օրիորդներ Արմեն Զաքարյանը և Գոհարիկ Խաչատրյան, առաջին շարքերում։

աղոտ պատկերացում են ունեցել Սովետական Հայաստանի և ընդհանրապես Սովետական Միության տեխնիկայի, կուլտուրայի և դիտության զարգացման մասին։ Հայրենական պատերազմը բաց է արել նրանց աչքերը։ Այժմ նրանք մեծ հափշտակությամբ կարդում և լսում են այն ամենը, ինչպես գրվում և խոսվում է Սովետական Հայաստանի մասին։ Եվ զարմանալի չէ, որ երբ մենք մասնավոր խոսակցությունների ժամանակ պատմում էինք Հայաստանի վերելքի մասին, նրա տեխնիկայի, դիտության և մշակույթի զարգացման մասին, մեր ունկնդիրները մեծ հափշտակությամբ լսում էին մեզ։ Անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ նրանցից մի հայ արհեստավորի՝ Հովսեփ Շեմմասյանի երկտողը, որը նա գրել է իմ և իմ քարտուղարի անունով և մեզ հանձնել հուլիսի 9-ին, հասարակական իմ մի ելույթից անմիջապես հետո։ Նա իր երկտողում գրել է.

«Մանկությունս մինչև այսօր, քառասուն դարձի մը ասելի, չատ մը բեմերուն վրայէն լսած էի իմ հայրենի երկրի անունը — դժբախտ, խեղճ, կարօտ և տխուր։ Եւ միշտ, հոգիս, աչքս արցունք կանձրևէր։ Փառք Աստուծոյ, իմ կեանքիս մէջ կղզամ այսօր միայն, օր մը երջանիկ 9 յուլիսի 1944 թ.։ Իմ հայրենիքի դեմքիս ինձ կոչունէ ուրախ, ժպտուն և կայտառ։ Հոգիս ժպտաց և բիւր ծափերով ձեզ ողջունեց։ Կարծես երկնքէն թռած գուլպ մը հրեշտակ ըլլայիք։

Յովսէփ Շեմմասեան»։

Հ. Շեմմասյանը մի ուրիշ անգամ ինձ ներից իր ձեռքով պատրաստած երկու նվեր և մեկ ոսկանավոր նվիրված կարմիր բանակին։

Գրեթե նույն բովանդակությամբ արտահայտվեցին նաև Կահիրեի և Աղեքսանդրիայի թեմական և քաղաքական անդամներից ոմանք, երբ մեր Եղիպտոս այցելելու կապակցությամբ դեսպանատիպ Տ. Մամբրե սրբազանի նախաձեռնությամբ և գլխավորությամբ պաշտոնական ժողով էր հրավիրված Եգիպտոսում։

Սփյուռքի մեր հայության համար Սովետական Հայաստանն այլևս սոսկ մի աշխարհագրական հասկացողություն չէ, այլ բարձր դիրքություն, մշակույթ և տեսնելիք

Կահիրեի և Ազեքսանդրիայի քիմական և բազաբական խորհուրդների համատումարը։ Մեջտեղում կանգնած է դերապատիվ Տ. Մամբրե սրբազանը։

կա ունեցող ստաջադեմ պետականություն։ Բեյրութում հրատարակվող «Զարթոնք» թերթը միանգամայն իրավացի իր սեպտեմբերի 17-ի առաջնորդող հոդվածում նկատել էր. «Այսօր երազ մը չէ ապես հայրենիքը, ոչ ալ տխրատասան, այլ երկաթ, թրակտոր, ջրանցք, երկաթուղի, դպրոց, համալսարան, պետականություն, բանակ»։

Հնդկաստանից Երուսաղեմ ասմբելյաժ եկած մի յոթ հայ երեսփոխանդ՝ Արամայիս Միրզոյանը, Սովետական Հայաստանին նվիրած իր մի ուսանավորի մեջ (որը հանձնեց ինձ էջմիածին բերելու համար), հետևյալն է գրել.

«Մեկ Հիմալայան բարձունքներից ու
Գանգեսի սուրբ ափերից,
Ողջույններ ենք բերում քեզի հայ տարեգիր
բեկորներից։
Այսօր քո վերելքի, քո յարուցեան ասնն
ենք ասնում,
Սովետական իմ Հայաստան, փառքիդ
ճամբան նոր է բացվում»։

Հիմալայան բարձրունքների վրա և Գանգեսի սրբազան ափերին տարագրված հայ երեսփոխանդը, ինչպես երևում է, պակաս հայրենասեր չէ, քան իր նախորդը՝ Հովսեփ Էմինը։ Ժամանակները շատ են փոխվել և հայոց պատմության լավագույն պահերի երազները իրագործվել են, մեր ժողովուրդն արդեն ունի իր անկախ, ազատ պետությունը Սովետական Միության մեջ բնականաբար։

Մերձավոր Արևելքի իմ ճանապարհորդության ժամանակ ես ստացել եմ բազմաթիվ ուղերձներ, նամակներ, ուսանավորներ, որոնց մեջ նրանց հեղինակները ասանձնապես իրենց հիացմունքն են հայտնում Կարմիր Բանակի շարքերում մարտնչող հայ հերոսների, նրանց կատարած սխրագործությունների համար։ Այդ նամակներից, ուղերձներից և ուսանավորներից անհրաժեշտ ենք համարում մի քանի հատվածներ բերել այստեղ։

Ազեքսանդրիայում մի ծերունի, Գա-

լուծյան ազգանունով, ինձ հանձնեց մի քանի ոտանավոր, որոնք նվիրված են Սովետական Հայաստանին և Կարմիր Բանակին: Այդ ոտանավորներից մեկում նա հերոս սավառնորդ Ստեփանյանից հետևյալն է խնդրում՝—

«Ով դու սաւառնորդ, քաջ Ստեփանեան,
Որ կը սաւառնես օդերու վերև,
Թափիլ չանթերդ կարկուտի նման...,

Իր մյուս ոտանավորի մեջ նա երկար կյանք է մաղթում Հայաստանը կերտողներին և հաստատություն ցանկանում Մեծ Ռուսաստանին.

«Մեր փոքրիկ երկիր, այսչափ շուտ ծաղկիր,
Ցաւկա թող ապրին դանի կերտողներ,
Երկար դարերու մեր նրազներն եկան,
Անմահ թող ըլլայ Մեծն Ռուսաստան»:

Կահիրեում հրատարակվող «Սաւառնակ» չարաթաթերթում բանաստեղծ Գրիգոր Համբիկյանը տեղավորել է մի ոտանավոր, որի մեջ նա խնդրում է համբուրել բանակի հրամանատար Բաղրամյանին և մյուս հերոսներին ու իրենց հիացմունքը հայտնել նրանց.

«Ամէնուն կողմէ, կուռնկ, շմոնաս,
Խորունկ հիացման ջերմ համբոյր մը տաս»:

Կահիրեից ինձ տրված ուղերձներից մեկում, որի հեղինակի անունն այժմ չեմ հիշում և ստորագրությունն անընթեռնելի է, հեղինակը խնդրում է. «Հայաստան վերադառնալիս բարև կտանէք մեր պիրելի եղբայրներին և քոյրերին և կասէք, որ կարդում ենք, «Սովետական Հայաստան» թերթում մեր հերոսական գործերի մասին... ամբողջ աշխարհը տեսնում է, թե ինչպէս մեր փոքրիկ Երկիրը շնորհիւ Սովետական Միութեան ժողովուրդների և մեծ, հանճարեղ և պաշտելի ՍՏԱԼԻՆԻ, կարճ ժամանակամիջոցում թոթափեց յետամնացութեան փոշին»:

Ի դեպ, ընկեր ՍՏԱԼԻՆԻ անունը մեր հայ հայրենիքների, ինչպես և Մերձավոր Արևելքի այլ ժողովուրդների շրջանում հերոսության, ազատության և փառքի սիմվոլ է: Ես հիշում եմ Հալեպի փոքրիկ մի երեխա, որի հայրը երբ պատվիրում էր նրան գոց (անդիր) ոտանավորն ասել, նա հպարտ պատիվ էր վերցնում և թոթովում՝

«Հերոս եմ ես, հերոս եմ ես,
Փոքրիկ, փոքրիկ հերոս եմ ես,
ՍՏԱԼԻՆ պապի թոռնիկն եմ ես»:

Ամեն տեղ, ուր մենք եղանք, ամեն հայ մարդ, որի հետ մենք խոսեցինք, չեղավ մեկը, որ գովասանքով չխոսեր Կարմիր Բանակի քաջագործությունների մասին և իր հիացմունքը չհայտներ Կարմիր Բանակի մարտնչող հայ մարտիկների սխրագործությունների առթիվ: Այդ տեսակետից բնորոշ է զերապատիվ Տ. Արտավազդ սրբազանի ելույթը Բեյրութի առաջնորդարանում հասարակական զանազան կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ. «Յարգանօք մենք կը յիշենք մեր հայ եղբայրներուն պիւցաղնական ոգորումները խորհրդային բանակներուն մէջ ի պաշտպանութիւն նուիրական հայրենիքին հասարակաց թշնամիներին դէմ»:

Բնորոշ է նաև Բեյրութում հրատարակվող «Ժողովրդական ձայն» թերթի մեր առաքելության կապակցությամբ գրված առաջնորդողի այդ հատվածը, որը վերաբերում է Սփյուռքի հայության դիրքին՝ հանդեպ Սովետական Հայաստանի և նրա ռազմական ջանքերի: Սփյուռքի հայությունը,— գրում է թերթը,— «Պատերազմի առաջին օրէն հա ի հա հետևեցաւ Սովետ Հայաստանի ռազմական ճիգին և աշխատեցաւ պտուտակ մըն ալ ինք անցնէ շինուող «Սասունցի Դաւիթ» թանկերուն»:

Եվ այդ պարտականությունը թերթը համարում է պանդուխտ որդու որդիական պարտականություն իր հարազատ մոր հանդեպ: «Պանդուխտ որդին չի կրնար մոռնալ իր մայրը, չի կրնար չերդել.

«Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թուշում եմ դէպ քեզ հոգւովս անդադար»...

Մեր ժողովրդի դարաւոր երկն է տուր կաց։ Արտասահմանի գրեթէ բոլոր թերթերը և ամսագրերը, իրենց պատրաստակամութիւնն էին հայտնում օգնելու Էջմիածնին նրա բոլոր պահանջները և ցանկութիւնները իրագործելու կյանքում։ Երուսաղեմում մեր եղած ժամանակ, Երուսաղեմի հայոց պատրիարքարանի պաշտոնական օրգան «Միոն» ամսաթերթի խմբագիր հոգևոր Եղիշէ վարդապետը, հայրենիքի կարոտով ապրող մի միտրան, մեր առաքելութեան կապակցութեամբ իր դրած առաջնորդողում հայտարարում է.

«Էջմիածնէն և Հայաստանէն կուգան անոնք, և այս պարագան միայն կը բաւէ, որ բոլորը նման դարիպին, իրենց հեռին մէջ սեղմած կարօտին անձուկը, իրենց հոգիին աչքերովն ու նայուածքներովը թուին հարցնելու իրեն... «Ուստի՞ կու գաս, ծառայ ենք ձայնիդ... մեր աչխարհէն խաբրիկ մը չունի՞ս»... սպասել իրեն սրտագին, լսել դինք հաւատքով ու անվերապահօրէն աջակցել անոր, Այս պէսք է ըլլայ բոլորիս փափաքն ու կամքը...»։

Վերին աստիճանի բարձր են գնահատում Սփյուռքի մեր հայերը Սրբազան տեղակալ գերապատիվ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Զեորեքչյանի հայրենասիրական ձեռնարկումները հայրենական պատերազմի օրերին։ Նա իրավացիորեն հայ եկեղեցու պատմության խոշոր դեմքերից մեկն է ճանաչվում։ Գերապատիվ Սրբազանն իր ուղիրձում հետևյալն է ինդրել ինձ. «Կը խնդրեմ, որ բարի ըլլաք անդամ մը ևս յանուն իմ հոգեսէր և ազգասէր ժողովրդին յայտնել իմ անհուն հիացմունքը բարձրաշնորհ Սրբազան Տեղակալին, որ դրեթէ աւանձինն դիմացաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր և մտաւոր վերակառուցման խոհական ճարտարապետը դառնալ, իր անլնահատելի նախաձեռնութիւնովը և այնքան կարճ ժամանակի մէջ նախաձեռնութիւններ ակսած «Մասունքի Դուռ» հրատարակչին ղեկավարի համազգային հանդանակութեան»։

ՊԸՐՈՅ. ԴՈԿՏ. Ա. ԱՐԳԱՎԱՍԱՑԵԱՆ

ՄԱՍԻՍ ՑԵՍՈՒՅՑՈՒՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Մատենադարանը հայկական ազգային կուլտուրայի գանձարանն է։ Հնագույն դարերից մեզ հասած ձեռագրերը, որ պահվում են Մատենադարանում, բացառիկ նշանակություն ունեն մեր ժողովրդի պատմության ուսումնասիրության և ընդհանրապես պատմագիտության համար։ Մատենադարանի հարստությունը բաղկացած է 13·000 հատոր ձեռագրերից, հնագույն տպագիր հրատարակություններից և Մատենադարանի ֆոնդերի հետ կապված պատմական դրականություններից։

Ձեռագրերի և այլ փաստաթղթերի այդ խիստ հարուստ հավաքածուն, որ հոգատարությամբ պահպանել և մեր օրերն է հասցրել հայ ժողովուրդը, հատուկ խնամք է պահանջում պատմական փաստաթղթերի պահպանման ժամանակակից բարձր տեխնիկային համապատասխան։ Այս կարևորագույն պահանջն առաջին հերթին պետք է բավարարի Մատենադարանի շենքը։

Շենքի համար կարևոր պայմաններից մեկն է կառուցման վայրը, որը շենքի նշանակության տեսակետից որոշ չափով հեռու դտնվելով քաղաքի կենտրոնական մասից, միաժամանակ պետք է մոտիկ լինի գիտական հիմնարկություններին։ Դրա հետ միասին անհրաժեշտ է, որպեսզի շենքի տեղն արժանի լինի Մատենադարանի նշանակության։

Այս էական պահանջներն էլ որոշել են շենքի կառուցման վայրը, որը գտնվում է Քանաքեռի բարձրավանդակի լանջին, Ստալինի անվան պողոտայի ծայրին, այն դիրքում, որ շենքի առանցքը զուգադիպի պողոտայի առանցքին և շենքն ամփոփի պողոտայի հեռանկարը։

Մատենադարանի շենքը գետեղված է այնպիսի տեղ, որը 18 մետր բարձր է լինելու դեպի շենքը տանող սանդուխքի առաջին աստիճանից։ Պողոտայի կողմից շենքի մասույցները լինելու են դարպաս և ապա 130 մետր երկարություն ունեցող մի լայն ու կանաչազարդ ծառուղի, որը հասնելու է մինչև շենքի առջևի հրապարակը տանող աստիճանները։

Ձեռագրեր և այլ հնագույն փաստաթղթեր պահելու նպատակները մշակված են թե տեսական և թե արտասահմանյան գիտության կողմից։ Այդ պահպանումը նախատեսում է մի շարք խիստ պարտադիր պայմաններ. դրանցից ամենակարևորն այն է, որ պահեստարանում հաստատվի անփոփոխ ջերմաստիճանի և խոնավության առավել նպաստավոր ռեժիմ։

Այս պայմանը կապված է սանիտարական և հիգիենիկ լավագույն պայմանների անհրաժեշտության հետ, որոնք ձեռագրերը պահպանում են բորբոսից և այլ սնկային ու միջատաբանական հիվանդություններից։ Պակաս կարևոր չէ ձեռագիրը պահպանել նաև փոշու թափանցումից, հրդեհից և այլն։ Ժամանակակից շատ մասնագետների տեսակետով պահեստարանում պետք է խստագույն կերպով բացառվեն ցերեկվա լույսը, մանավանդ ճառագայթները։

Բացի այս բոլորից, խիստ կարևոր է պահեստարանը պահպանել նաև օդային հարձակումներից։ Ներկա պատերազմի փորձը ցույց տվեց, որ եվրոպական ժողովուրդների նմանօրինակ կուլտուրական գանձարաններն օդային հարձակումներից հիմնավորապես տուժել են այնտեղ, որտեղ

համապատասխան միջոցներ ձեռք չեն առնված դրանց անվտանգության համար։

Մատենադարանի շենքի նախագիծը կազմելիս հաշվի են առնված վերոհիշյալ և այլ պայմաններ։

Այս բոլորի հետ միասին հարկավոր է նշել, որ հին ձեռագրերի պահպանմանը և ուսումնասիրությանը հարմարեցված շենքերը բացառություն են կազմում։ Ձեռագրերի և այլ արժեքավոր փաստաթղթերի պահեստարաններից շատերը գտնվում են խոշոր գրադարաններին կից, որպես մեքենություն բաժին, ունենալով պահպանման և սպասարկման իրենց հատուկ ռեժիմը։ Այս հանգամանքի տեսակետից Մատենադարանի շենքը պետք է դառնա հատուկ տեղ որպես ազգային կուլտուրայի ձեռագիր նյութերի պահպանման և ուսումնասիրման բացառիկ ճարտարապետական օբյեկտ։ Իսկ այս պայմանն իր հերթին պահանջում է որոշել շենքի բոլոր տարրերի ճարտարապետությունը, նկատի առնելով նրա ազգային բնույթը, ձեռագրերի պահպանման տեխնիկայի ժամանակակից նվաճումները, ձեռագրերի ուսումնասիրության գործի դիտական դրվածքը, այցելուների սպասարկումը, կոնսերվացիան և այլն։

Ըստ նախագծի ձեռագրերը պահվելու են ներքնահարկում, որտեղ նախատեսվում է զետեղել նաև այն բաժինները, որոնք պետք է օժանդակ հանդիսանան. դրանք են ախտահանման բաժինը, ձեռագրերի կոնսերվացման և ռեստավրացիայի լաբորատորիան և այլն։

Շենքի վերին հարկերը նախատեսված են Մատենադարանի այցելուների սպասարկման համար։ Առաջին հարկում լինելու են գլխավոր վեստիբյուլը, ցուցահանդեսային դահլիճը, լեկտորիումը, դիրեկտորի առանձնասենյակը և դրասենյակը։ Երկրորդ հարկը հիմնականում հատկացված է դիտական աշխատողներին. այստեղ լինելու է պարապմունքի տասն առանձնասենյակ, որոնք այնպես են կառուցվելու, որ շրջապատի ձայները ներս չթափանցեն։ Երրորդ հարկում զետեղվում են նիստերի դահլիճը, հայագիտության դահլիճը, ընթերցարանը, որոնք ունենալու են մի շարք սպասարկող բաժիններ, ինչպես օրինակ գրացուցակների բաժին, օժանդակ գրականության սենյակ, տեղեկատու-բիբլիոգրաֆիական բաժին, բաժին վարիչի առանձնասենյակ և այլն։ Չորրորդ հարկում հիմնականում զետեղվելու են հին գրացուցակի բաժինը, կոմպլեկտավորման բաժինը, գիտական բիբլիոգրաֆիական բաժինը և օժանդակող բաժիններ։

Վերոհիշյալ դահլիճներն ու վեստիբյուլը կառուցվում են հին հայկական ճարտարապետական-կոնստրուկտիվ եղանակներով. միայն թե վերջիններս անհրաժեշտ վերամշակման են ենթարկված ժամանակակից ձևերին մոտեցնելու համար։ Անառարակություն, ինտերյերների որոշ դեկորատիվ բնույթը, որն արտահայտված է շենքի ոգուն և նշանակությանը համապատասխան, անհրաժեշտ է և արդարացնում է իրեն։ Ազգային ճարտարապետության գրավիչ հատկանիշներն այս շենքում պետք է արտահայտվեն որքան կարելի է վառ և ուժեղ կերպով։ Վեստիբյուլի ճարտարապետության մեջ օգտագործված են Սանահնի վանքի առաջին դամբի ճարտարապետական ձևերը։

Հայագիտության դահլիճի ճարտարապետական կառուցման մեջ օգտագործված են Հաղբատի վանքի մեծ դամբի կոնստրուկտիվ ձևերը։ Նիստերի դահլիճի ճարտարապետությունը որոշված է 11—12-րդ դարերի գավիթների պլանավորման տարածված եղանակների ոգով, որտեղ քառասյուն հիմքի վրա հանգչում է գմբեթը իր ծանրությունը փոխանցելով սյուներին առագաստների միջոցով։ Նիստերի դահլիճի ճարտարապետությունն ձևերում զուգորդված են Հոռոմոսի և Սանահնի վանքի գավիթի եղանակները, որոնք հարկավ զգալի չափով վերամշակված են։

Ինչպես կարելի է տեսնել ինտերյերների մշակումից խնդիր է դրված օգտագործել հայկական ճարտարապետության զարգացման մի շրջան, որը Թորամանյանն

իր գրքում համեմատում է ogiv ոճի հետ։

Մատենադարանի մնացած խոշոր բաժինները, ինչպես օրինակ ցուցահանդեսային դահլիճը, լեկտորիումը, ընթերցարանը, իրենց ճարտարապետական լուծման տեսակետից ոճական ընդհանրություն ունեն վերևում հիշատակված դահլիճների և վեստիբյուլների հետ. դրանց կառուցման մեջ հիմնականում օգտագործված է 11—13 դարերի ճարտարապետությունը։

Անտարակույս, այդ գարաշրջանի ճարտարապետությունը, որը դուրկ է հնի կրկնության հատկանիշներից, հատկապես Անիի շատ հուշարձանները, ինչպես Հաղպատի, Սանահնի — ծաղել ու զարգացել են քաղաքացիական ճարտարապետության հետ միասին, գարգացող քաղաքային կյանքի ուժեղ ներգործությամբ։ Հենց այս է կարևորում մեր նախագծի համար օգտագործված հուշարձանների հատուկ արժեքը, այսինքն՝ այդ հուշարձանները չեն պատկերում ֆեոդալական Հայաստանին և ավելի մոտիկ են Մատենադարանի շենքի նշանակությանը և խմբագրին։

Անցնելով ֆասադի նկարագրությանը, պետք է նկատել, որ նախ և առաջ խնդիր էր դրված գտնելու գլխավոր ֆասադի այնպիսի լուծում, որը նոր, ինքնուրույն և յուրահատուկ կերպարանք տար Մատենադարանի շենքին։ Ուստի խիստ կարևոր էր ելակետ ունենալ ճարտարապետության այն հուշարձանները, որոնք առաջադիմական հատկանիշների հետ միասին պարունակին հայկական ճարտարապետության պատմական զարգացման ուղիների խորարտացոլումը, որը Մատենադարանի շենքի նախագծման համար թե անհրաժեշտ է և թե կարևոր, քանի որ հենց այստեղ մենք պարտավոր ենք այդ արտացոլումը դարձնել ու հասցնել մինչև մեր օրերը։

Ֆասադի կառուցման համար օգտագործվել է Անիի հուշարձանների և հատկապես Առաքելոց եկեղեցու հարավային դավթի ճարտարապետությունը։

Սյուների ռիթմը, որոնք այստեղ կապված են լոանիստ որմախորշերի միջև եղած պատի հետ, կենտրոնում ընդարձակված է գլխավոր մուտքի տեղադրման համար կամարի հնության մի եղանակ։

Ճարտարապետական ուժեղ ներգործություն է ունենում միթխարի որմնախորշերի ռիթմիկ դասավորությունը, որոնք կողմերի վառ լուսավորությամբ և սոճերով գոնում են ֆասադի վայելչակազմ հողավորումը։

Հայկական ճարտարապետության համար բնորոշ հանդիսացող այս ձևը կիրառվելով ֆասադի կլասիկ սիմետրի պայմաններում, անտարակույս արտահայտիչ կլինի։ Ի հակադրություն մուտքի որոշ չափով պարզունակ բնույթի, որ ունի Առաքելոց եկեղեցու դավթը, Մատենադարանի նախագծում նկատի է առնված վայելչագեղ գլխավոր մուտք, որը ներդաշնակում է հայկական ճարտարապետության ստղային տրադիցիաների հետ։

Մատենադարանի շենքը ըստ նախագծի երևսպասվելու է Երևանի հոկված բաղալտով։

Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(«Գրական թերթ», № 1—(321), հուն.)

Շապիկը և տիպասարքերը Ցկ. ՅԱՐԱԳՐՈՍԻ

ԼՈՒՑՍ ՏԵՍԱՎ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՕՐԱՑՈՒՅՑԸ
1945 ԹՎԱԿԱՆԻ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀՈԴՎԱԾՆԵՐ ԹԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ԱՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԹԵ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, «ԷՋՄԻԱԾՆԻ» Ա.ՄԱՍՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Армянская ССР, Вагаршапат, Редакция журнала „Эчмиадзин„

Redaction of the magasin „Echmiadzin“ Vagarshapat
Armenian, USSR.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ